Նորմալ երկրներում, Վահագ ջան, այդ երկրների առաջնորդներն ու ԿԸՀ նախագահները տեղում հրաժարականի դիմում կգրեին: Դու եկել, գիտությունով ես չալում, թե բա՝ «տող է թռել», Նիկոլը թառել ամբիոնին՝ հաթաթա է տալիս Գագիկ Ծառուկյանին՝ կնստացնեմ, «ստոյկա կտաս», ֆլան-ֆստան: Չեք կարողանում մարսել 4 աթոռի կորուստը:

Կարդացեք՝ էջ 5

Խնդիրը միայն Գյումրին չէ: Խնդիրը գործող իշխանության քաղաքական մտածողությունն է, որը վերջին տարիներին դրսեւորվում է մեկ վտանգավոր սկզբունքի տեսքով. այն ամենը, ինչ չի գտնվում իշխանության վերահսկողության ներքո, պետք է ենթարկվի, իսկ այն, ինչ չի ենթարկվում, պետք է վերափոխվի, վերացվի քաղաքական դաշտից:

Կարդացեք՝ էջ 6

Ես իմ կոլեգաներից շատերի մասին վատ բան չեմ ուզում ասել, բայց ցավով եմ տեսնում, եւ դա նոր չէ, գալիս է դեռ ԽՍՀՄ-ից, որ մերոնք ավելի շատ պրոպագանդիստներ են, քան՝ արվեստագետներ... նախարարությանը կից աշխատակիցներ: Այդ մտածելակերպը մինչեւ դուրս չգա, վիճակը չի փոխվի: Չի կարող մտավորականը լինել վախկոտ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 94 (4229), 12 հունիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Հունիսի 7-ի ընտրություններից հետո օրակարգային թիվ մեկ հարցը շարունակում է մնալ մանդատները վերցնել-չվերցնելու հարցը: Ճիշտ է՝ երեկ Նարեկ Կարապետյանը հայտարարեց, որ այսօր դիմելու են ԿԸՀ՝ ընտրությունները չեղարկելու պահանջով, բայց լուրեր կան, որ Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստանում» կողմ են մանդատները վերցնելուն, հատկապես՝ եթե ԲՀԿ-ն վերահաշվարկի արդյունքում անցնի խորհրդարան: Մեզ ասացին, որ մինչ երեկ երեկո Սամվել Կարապետյանի հետ ապագա ֆրակցիան այդ հարցով քննարկում չի ունեցել: Ասացին, որ ընդհանրապես ընտրություններից հետո ապագա պատգամավորները դեռ չեն հանդիպել Կարապետյանի հետ, բացառությամբ՝ Նարեկ Կարապետյանի եւ հատուկենտ անձանց: Պատգամավորության թեկնածուները կողմ են խորհրդարան գնալուն, բայց Կարապետյանի տեսակետը դեռ հայտնի չէ: Ռոբերտ Քոչարյանի «Հայաստան» դաշինքում էլ են հակված՝ օգտվելու ոչ լեգիտիմ իշխանության թույլ դիրքերից՝ վերցնելով մանդատները: Փաստարկն այն է, որ գուցե ինչ-որ պահի Նիկոլ Փաշինյանին անվստահություն հայտնելու հնարավորություն ստեղծվի: Բացի այդ, մանդատ չվերցնելը լուծում չէ, եւ դա պարզ երեւում է Վրաստանի օրինակով, որտեղ ընդդիմությունը՝ Եվրոպայի հուժկու աջակցության պարագայում, մանդատները չվերցրեց, բայց դա ոչ մի ազդեցություն չունեցավ իշխող կուսակցության եւ կառավարության վրա: Այդուհանդերձ, վերջնական եւ միասնական որոշումը երկու խմբակցությունները՝ «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները, կայացնելու են համատեղ:

ՔՊ-ում սրտատրոփ սպասում են կիրակի օրվան, երբ կհրապարակվեն ընտրությունների վերջնարդյունքները, եւ դրանից հետո միայն Նիկոլ Փաշինյանը կադրային որոշումներ կկայացնի: Խոսում են, որ առաջնորդվելու է ընտրությունների արդյունքներով. այն պաշտոնյաներն ու կուսակիցները, որոնք չեն արդարացրել իր սպասելիքները եւ ՔՊ-ի համար բարձր տոկոսներ «չեն խփել», պաշտոնանկ կարվեն կամ նոր պաշտոն չեն ստանա: Հատկապես անհանգիստ են մարզպետները, որոնք ի պաշտոնե մարզային շտաբների ղեկավարներն էին եւ իրենց տարածքներում գրանցված արդյունքների գլխավոր պատասխանատուներն են համարվում: Հիմա նրանց՝ պաշտոնում մնալ-չմնալու հարցը կախված է ՔՊ-ի թվերից: ՔՊ-ում հատկապես դժգոհ են Լոռվա եւ Շիրակի թվերից: «Դեմոկրատ» Փաշինյանը որոշել է ոչ միայն մարդկանց ազատ կամարտահայտության վրա ազդել, այլեւ վարչական լծակները բավարար չափով չկիրառած եւ ընտրողներին տեռորի չենթարկած պաշտոնյաներին պատժել:

Մակրոն, լսո՞ւմ ես

Շատ-շատերն էին զգուշացնում, որ վերընտրվելուց հետո այլեւս հնարավոր չի լինելու Նիկոլ Փաշինյանին զսպել: Ոչ միայն Ադրբեջանին ուղղված նոր զիջումներ են իրականացվելու, այլեւ քաղաքական հետապնդումների նոր ալիք է սկսվելու, եւ «կզըցնել-սատկացնել» լեքսիկոնի նորանոր զարգացումների ենք ականատես լինելու: Ընտրությունների օրվանից սկսած, այդ ամենի սաղմերը զգացվեցին, իսկ երեկ նա ուղղակի հայտարարեց, որ ընդդիմության ստացած ձայները բացառապես ընտրակաշառքի ու փողի արդյունքում են ստացվել, հակառակ դեպքում ընդդիմությունն «անցողիկ շեմը չէր հաղթահարի», ասաց, որ դատական համակարգը կոռումպացված է, հայտարարեց, որ ընտրակաշառքի համար մեղադրվողները մինչեւ 2031 թվականի ընտրությունների օրը «բանտում են լինելու»: Իսկ ամենասյուռն այն է, որ մեր լրագրողի հարցին, թե արդյո՞ք ինքը նման հայտարարություններով չի գերազանցում իր լիազորությունները, չի մտնում դատական համակարգի իրավասության դաշտ եւ չի խախտում անմեղության կանխավարկածը, կարելի է ասել՝ ժողովրդավարական երկրին շատ «հարիր» պատասխան տվեց, մոտավորապես ասելով՝ լավ եմ անում, եթե պետք լինի, հրապարակում դատավարություն էլ կանեմ: Իսկ այս օրերին կառավարությունը, ՔՊ անդամները հպարտանում են եվրոպական տարբեր երկրներից ստացվող շնորհավորանքներով, որոնց մեջ կարմիր թելի նման մի միտք է անցնում՝ եվրոպական առաջնորդները շնորհավորում են հայ ժողովրդին՝ «ժողովրդավարությունն ընտրելու» համար: Երեւի իրենց երկրներում ժողովրդավարությունն այսպես են պատկերացնում: Ասենք, եթե Մակրոնը հայտարարեր, թե ֆրանսիացի միլիարդատեր Բեռնար Առնոն պետք է ունեզրկվի կամ 10 տարով բանտ նստի, նման հայտարարությունից հետո քանի՞ որպես կշարունակեր պաշտոնավարել: Իսկ Հայաստանում, փաստորեն, դա հնարավոր է:

Մեր տեղեկություններով, ՔԿՀ-ներից մեկում ընտրությունների գիշերը ծեծի են ենթարկել կալանավորներին: Եթե հիշում եք՝ առաջին տեղեկությունը ստացվեց կալանավայրերից, եւ պարզվեց, որ ՔՊ-ն մեծ թվերով պարտվել է ընդդիմությանը: Այն պահից, երբ լուրեր են տարածվել, որ «Քաղպայմանագիրը» հաղթանակ է տանում, խցերից սկսել են վիրավորական, հայհոյախառն արտահայտություններ հնչեցնել իշխող ուժի եւ Փաշինյանի հասցեին: Դրանից ժամեր անց բանտի օպերներն անսպասելի մտել եւ ջարդել են ըմբոստացած բանտարկյալներին: Նշենք, որ գրեթե բոլոր ՔԿՀ-ներում ՔՊ-ն իր արդյունքներով զիջել է ընդդիմադիրներին:

ՄԵՇՈՂԸ ՄԵՇՎՈՂԻՑ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐԵԼ

Հունիսի 2-ին Արթիկում, հենց համայնքապետարանի շենքի առջեւ, ՔՊ-ականները, այդ թվում՝ պատգամավորության թեկնածուի որդին, դաժան ծեծի էին ենթարկել Ռոբերտ Քոչարյանի աջակից Հակոբ Հարությունյանին: Խոսքն Արթիկի համայնքապետարանի գովազդային բաժնի պետ Արտակ Գրիգորյանի ընտանիքի մասին է: Գրիգորյանի կինը՝ Ժաննա Ասատրյանը, ՔՊ-ի ցուցակով թեկնածու է: Իսկ ծեծի գլխավոր կազմակերպիչը եղել է նրա որդին՝ Սիփան Գրիգորյանը: Քանի որ դեպքը տեսագրվել էր եւ մեծ աղմուկ էր բարձրացրել, ուստի իրավապահները պետք է ինչ-որ կերպ արձագանքեին: Բայց այլ ելք են գտել: Մեր տեղեկություններով, Սիփան Գրիգորյանը հոր՝ Արտակ Գրիգորյանի, եւ հորեղբոր հետ գնացել է Հակոբ Հարությունյանի մոտ, ներողություն խնդրել, տուժողը տեղի է տվել ու հետ վերցրել բողոքը: Մեզ հետ զրույցում Հակոբ Հարությունյանը հաստատեց տեղեկությունը. «Հարեւանությամբ ենք ապրում, նույն հողուջրի մարդիկ ենք: Եկել էին, ասացին, որ զղջացել են, չէին ուզի, որ նման բան լիներ, բացատրեցին, որ միջադեպը քաղաքական հողի վրա չի եղել, ուղղակի անցնելուց մտածել են, որ մեքենայի մեջ նստած՝ իրենց եմ նկարում, կողքից ասել են, որ իբր ռեպլիկ եմ թողել, բայց իրականում նման բան չկար: Ես էլ որոշեցի դիմումս հետ վերցնեմ, հաշտվենք, անցնի գնա էս միջադեպը»: Նրա խոսքով, արդեն քննիչին հանդիպել է, հայտնել, որ հաշտության են գնում եւ ուզում է հետ վերցնել բողոքը: Իհարկե, եթե հակառակը լիներ՝ ընդդիմությունից որեւէ մեկն անօրինական արարք արած լիներ, հիմա վաղուց բերդում կլիներ, եւ իշխանության համակիրն էլ երբեք դիմումը հետ չէր վերցնի:

ՄԵՐ ՈՐՈՇ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ, ԳԼԽԱՎՈՐԸ ԹՈՂԱԾ, ԸՆԿԵԼ ԵՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ՀԵՏԵՎԻՑ

*Հարցազրույց «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մեսրոպ Առաքելյանի** հետ*

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

- Այս ընտրությունը, ըստ Ձեզ, ինչո՞վ էր առանձնանում նախորդ ընտրություններից, եւ որքանո՞վ են ընդունելի Ձեզ համար հրապարակված արդյունքները:

- «Ապրելու երկիր» կուսակցության տեսակետն այն է, որ ընտրություններն անցել են ընտրախախտումներով: Մինչ բուն քվեարկության փուլը, մասնավորապես քարոզարշավի եւ դրան նախորդած ժամանակահատվածում, էական խախտումներ են եղել, առաջին հերթին՝ վարչական ռեսուրս, ճնշումներ՝ ուժային կառույցների կողմից, որոնք էականորեն անդրադարձել են մարդկանց վարքագծի վրա: Ցավոք, մեր հասարակության մի մասը, սոցիալական եւ տարբեր խնդիրներից ելնելով, ստիպված գնացել է այդ ճնշումներին, զերծ են մնացել նաեւ ճնշումների մասին բարձրաձայնելուց, ինչն էլ էական ազդեցություն է ունեցել: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն տեղամասերում, որտեղ ակնհայտ բարձր մասնակցություն է եղել, ու ակնհայտ երեւում է, որ վարչական ռեսուրս է կիրառվել, այդտեղ ՔՊ-ի ձայները շատ ավելի բարձր են, այսինքն՝ այդ տեսանկյունից մենք համարում ենք, որ այս արդյունքների վրա ձեւավորված կառավարությունը ոչ լեգիտիմ է: Այստեղ պետք է ընդգծել նաեւ ձերբակալությունները, որոնք փաստացի այդ ուժերի մոտ առաջացրել են խոչընդոտներ: Բազմաթիվ են դեպքերը, երբ մարդկանց մարզերից կանչել են հարցաքննության, ամբողջ օրը սպասեցրել ու հետ են ուղարկել: Սա հանգեցնում է ոչ միայն հոգեբանական ճնշման, այլ նաեւ՝ ժամանակի կորստի: Քարոզարշավի ընթացքում եւս խնդիրները բազմաթիվ էին, Հանրային հեռուստաընկերությունն ակնհայտ կողմնակալ քարոզչություն էր իրականացնում: Այս ամեն ինչն իր չափով ազդեցություն է ունեցել: Եթե ամեն մի մեթոդը 10-20 հազար հոգու վրա ազդի, ապա դա կդառնա 190-200 հազար ընտրող, որոնք հնարավորություն չեն ունեցել իրենց կամքն ազատ արտահայտել: Ազատ ընտրությունների պարագայում այս պատկերը լրիվ այլ կլիներ, եւ լրիվ այլ կառավարություն կձեւավորվեր:

- Զինվորներին վերջին պահին՝ ժամը 20:00-ին մոտ կամ անց, ընտրատեղամաս բերելն ինչո՞մասին կարող է վկայել:

- Զինվորների մասնակցությունը, ցավոք, տասնամյակներով շարունակվող խնդիր է, այսինքն՝ ակնհայտ է, որ զինվորների նկատմամբ վերահսկողության մեխանիզմները շատ ավելի մեծ են լինում: Ինչ վերաբերում է զինվորներին վերջին պահին ընտրության բերելուն, չեմ ուզում ասել, որ հատուկ են արել, ենթադրում եմ, որ դա արվել է նրա համար, որ քանի որ համայնքների ընտրատեղամասերում են քվեարկում, այնպես են արել, որ չխաթարի ընտրական պրոցեսի բնականոն ընթացքը, որ միանգամից մի քանի հարյուր զինվոր ընտրատեղամաս գալով հերթեր չառաջացնեն:

- Ընտրություններից հետո մեկնարկել է ձայների վերահաշվարկը, եւ ակնհայտ է, որ խախտումներ են տեղի ունեցել, մեծ մասամբ՝ հօգուտ իշխանությունների: Սա ինչո՞ւ մասին է խոսում, հատկապես որ ԲՀԿ-ի դեպքում մեկ ձայնն անգամ կարող է որոշիչ լինել:

- Բավականին մտահոգիչ է, որ այս դարում, օր ու գիշեր բարձր տեխնոլոգիաներից ու համաշխարհային ներդրումներից խոսող իշխանությունը չի կարողանում ապահովել ձայների հաշվարկի ավտոմատացված վերահսկում: Ծիծաղելի է, որ ինչ-որ մեկը նստած՝ թվեր է մուտք անում, երբ կարելի էր դա ավտոմատացված անել, հատկապես որ բազմաթիվ երկրներ արդեն անցում են կատարել, որ հենց քվեատուփի մեջ սկսածը ճանաչում է քվեաթերթիկը, թե ում ես ընտրել, այդ թիվը հաշվում է, վերջում ձայները հաշվելուց համադրում են: Այս մեխանիզմները պետք է իշխանություններն դնեն: Բայց այս իրավիճակում ես՝ ինքս էլ մի շարք փաստեր համադրել եմ, համատարած մեծ տարբերություն չեմ տեսնում: Իհարկե, ԲՀԿ-ի պարագայում դա վճռորոշ է, բայց համատարած չէ, ավելի շատ սա փնթիության հետեւանք է, ոչ թե համակարգված կեղծիքի, որովհետեւ տասնյակ մարդիկ են ներգրավված այս պրոցեսում: Ինչ-որ մարդիկ կամ արջի ծառայություն են մատուցել, որովհետեւ իրենք պատասխանատվություն են ունեցել ձայներ ապահովելու, կամ էլ սխալի հետեւանք է եղել: Ամեն դեպքում, հաշվարկն իր արդյունքները կտա, բայց մյուս կողմից ես չեմ ուզում, որ միայն այս փուլի վրա կենտրոնանանք: Ցավոք, ընդդիմադիր որոշ գործընկերներ կենտրոնացել են, որ ընտրախախտումները հենց այս ձայների արձանագրած ֆայլում են, բայց, գլխավորը թողած, պետք չէ ընկնել միայն սրա հետեւից, իհարկե, այստեղ խոսքը «Բարգավաճի» մասին չէ:

- Ընտրություններից հետո ամենաքննարկված հարցերից է մանդատները վերցնել-չվերցնելու հարցը: Ձեր կարծիքով՝ ինչ պետք է անի ընդդիմությունը:

- Խնդիրը մանդատները վերցնել-չվերցնելը չէ, խնդիրն այս կամ այն ճանապարհով գնալու հաջորդ քայլերն են, որովհետեւ, եթե մենք դնում ենք խնդիր, որ օրվա իշխանությունը պետք է հեռանա, ապա մենք պետք է գանք վերջից՝ թե ինչ պետք է անենք դրա համար: Միայն մանդատ դնելը չի բերելու իշխանության հեռացմանը, ոչ էլ մանդատ վերցնելը: Հետեւաբար, քայլերի ամբողջականության պարագայում պետք է գնահատել: Բավականին բարդ է՝ երկու ճանապարհն էլ ունի եւ իր առավելությունները, եւ իր թերությունները: Այս մանդատ վերցնել-չվերցնելու խոսույթն ավելի շատ եկավ նախորդ խորհրդարանի ժամանակ, որը որոշ չափով քաղաքական ճգնաժամ առաջացնում է, բայց չի դառնում ԱԺ-ն լուծարելու հիմք: Բայց նման օրինակ ունենք Վրաստանում, որը չի բերում իշխանության թուլացման, այդ պատճառով միանշանակ չէ, թե որ ճանապարհն է արդարացված:

Ո՞Վ Է ՎՃԱՐՈՒՄ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Կառավարությունը որոշել է աջակցել արտահանողներին, ամեն նիստին, ՀՀ պետական բյուջեի հաշվին, «աջակցության միջոցառումներ» է հաստատում: Մեկ շաբաթ առաջ՝ հունիսի 4-ին, ջերմոցային լոլիկի, պղպեղի, ելակի եւ ծաղկի արտահանումը սուբսիդավորելու մասին որոշում էր ընդունել, եւ այս մասին պարծանքով ու նախընտրական քարոզի տրամաբանությամբ, սրտիկավոր գրառում էր արել վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը:

Երեկ էլ Հայաստանից թարմ պտղի, շշալցված խաղողի գինու, բրենդիի (կոնյակի մասին է խոսքը) եւ հանքային ջրի արտահանման համար է որոշել փողեր տալ: Ոչ պակաս պարծանքով էկոնոմիկայի փոխնախարար Արմեն Խոջոյանը հայտարարեց հունիսի ընթացքում արտահանում իրականացնող տնտեսվարողներին տրամադրվելիք փոխհատուցման չափերը.

ծիրանի մեկ կգ-ի համար՝ 200 դրամ

սալորի, դեղձի, նեկտարինի 1 կգ-ի համար՝ 250 դրամ

կեռասի 1 կգ-ի համար՝ 400 դրամ,

շշալցված խաղողի գինու յուրաքանչյուր լիտրի համար՝ 350 դրամ

շշալցված բրենդիի յուրաքանչյուր լիտրի համար՝ 830 դրամ

հանքային ջրի յուրաքանչյուր լիտրի համար՝ 150 դրամ:

Հունիսի համար արտահանողներին բյուջեից կտրվի 3,9 մլրդ դրամ: Սա հունիսի ընթացքում արտահանման ենթակա ծավալների համար փոխհատուցման չափն է: Ըստ նախարարության տվյալների, միայն հունիսի 1-ից արտահանվել է շուրջ 257 հազար կգ կեռաս, 64 հազար 900 կգ ծիրան, որի համար կտրվեն փոխհատուցումներ:

Հիշեցնենք, որ հունիսից «Ռոսսելխոզնադզորը» սահմանափակել է կեռասի, բալի, ծիրանի, սալորի, դեղձի, նեկտարինի, խնձորի ու տանձի, սմբուկի, կարտոֆիլի, չրերի ներկրումը Հայաստանից:

Փաստորեն, բյուջեից մեր հաշվին ինչ-որ փոխհատուցումներ են սահմանվում, կոպտորեն խախտվում է «Բյուջեի մասին» ՀՀ օրենքը: Տարվա կեսից վարչապետը կամայական ձեւով նոր ծախսեր է ավելացնում՝ քաղաքացու գրպանից հանելով իր «փայլուն» կառավարման հետեւանքով հասցված վնասները, եւ նույն օրն էլ հայտարարում են ակցիզային տուրքը բարձրացնելու մասին, ինչի հետեւանքով ծխախոտի, խմիչքի գները կբարձրանան: Ըստ էության, նոր ծախսերը հենց մենք ենք ֆինանսավորում՝ թանկացած ապրանքների դիմաց վճարելով:

Պետական կառավարման տեսանկյունից խնդրահարույց չէ՞ արդյոք կառավարության այս քայլը, իրավունք ունե՞ն «Բյուջեի մասին» ՀՀ օրենքը խախտել ամեն պահի, երբ ցանկանում են: Կառավարման մասնագետ, տնտեսագետ **Հովհաննես Ավետիսյանի** կարծիքով, խնդիրը ոչ թե տնտեսական կառավարման առումով է, այլ՝ քաղաքական:

«Ձեզ համար նորությո՞ւն է: Միշտ էլ նման բաներ եղել են: Մեր պետության ստեղծման օրվանից տարբեր ոլորտներում նման ծրագրեր եղել են, սա նոր չէ: Իր արածն օրինական է՝ կառավարությունն իրավունք ունի նման գործողություններ ձեռնարկելու: Քաղաքական համատեքստում է այդ որոշման խնդիրը: Իրենք մարդկանց համար պրոբլեմ են սարքում իրենց քաղաքականությամբ, հետո ցույց են տալիս, թե դա մենք չենք՝ ռուսներն են, իսկ իրենք մեզ օգնում են: Սա է հարցը»: Բայց իրավունքի տեսանկյունից կա պրոբլեմ, ստացվում է, որ մենք ենք վճարում իրենց վատ քաղաքականության պատճառով: «Դա նորությո՞ւն է: Այս երկրում ամեն ինչի համար էլ Հայաստանի քաղաքացին է վճարում, այդ թվում՝ Նիկոլի պերաշկի ուտելու: Բա ո՞վ է վճարում: Էն ավտոբուսով, որ գնում են այստեղ եւ այնտեղ, թեկուզ դրամահավաք են անում, իբր՝ մասնավորն է տալիս, բայց էլի ծախս են ցույց տալիս, ու էլի հարկ վճարողն է դրա համար վճարում, այսինքն՝ մենք»,- նշեց տնտեսագետը:

«Հայաստան» դաշինքի պատգամավոր, տնտեսագետ **Արթուր Խաչատրյանը** կարծում է, որ կառավարության սահմանած փոխհատուցումները բավականին ցածր են՝ գյուղացու ապրանքն էժան են գնահատել: «200 դրամ՝ ծիրանի համար, 250՝ դեղձի համար. սա իրականում բավականին էժան է՝ որպես մթերման գին: Երկրորդ. չի հասկացվում, թե ինչ ծավալով եւ որքան ժամանակ է տրվելու փոխհատուցումը: Ի վերջո, այդ գումարը որտեղի՞ց է գալիս: Չեմ կարծում, որ պետբյուջեի մեջ պահուստային ֆոնդն այնքան է, որ այդ ամենին բավարարի: Նույնիսկ եթե ամբողջ պահուստային ֆոնդն ուղղեն դրան, չի բավարարելու մթերման փոխհատուցումների համար: Չնայած վեց ամիս արդեն անցել է, ու ես չգիտեմ, թե պահուստային ֆոնդից ինչ է մնացել: Սա ուղղակի ժամանակավոր աչքակապություն է, խաբեություն»: Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության հակառուսական քաղաքականության դիմաց հասարակ քաղաքացի՞ն է բյուջեից վճարում: «Այո, վստահ եմ, Փաշինյանն իր աշխատավարձը, պարգեւավճարը, գառան խաշլաման շարունակելու է ուտել՝ կարտոֆիլը թողնելով մյուսներին»:

Կառավարության նիստին նաեւ ընդունվել է որոշում, որով ժամանակավոր (6 ամիս ժամկետով) արգելք կսահմանվի ցորեն ապրանքատեսակի արտահանման նկատմամբ: Նշվում է, որ որոշումն ուղղված է ՀՀ պարենային անվտանգության եւ տնտեսության կայունացման ապահովմանը: Ըստ Արթուր Խաչատրյանի, այս որոշումը պայմանավորված է նրանով, որ կառավարությունը սպասում է, որ Ռուսաստանից ցորենի արտահանումը Հայաստան եւս կսահմանափակվի: «Ես հնարավոր համարում եմ, որ նման բան լինի, որովհետեւ Ռուսաստանը պարբերաբար արտահանումներն արգելում է, ԵԱՏՄ երկրների համար բացառություններ անելով, քովիդի ժամանակից կարող եք նայել եւ համոզվել, բայց հիմա ներկայիս քաղաքական պայմաններում չեմ բացառում, որ մեզ վրա դա այլեւս չտարածվի»,- ասաց Արթուր Խաչատրյանը:

Մեծ ողբերգության մեջ է հայ ազգը

Խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին, Նիկոլ Փաշինյանը 49,9 տոկոս քվե ստացավ մի շարք կեղծիքների, ընտրախախտումների արդյունքում, ընդդիմադիր երեք ուժ՝ «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինքներ եւ ԲՀԿ, անցնում են խորհրդարան, սակայն կա տեսակետ, որ ընդդիմադիր ուժերը պետք է հրաժարվեն իրենց մանդատներից եւ պայքարը շարունակեն փողոցում: Այս ընտրություններն անցան աննախադեպ խախտումներով, մենք հետաքրքրվեցինք, թե բանասիրական գիտությունների դոկտոր **Լիլիթ Արզումանյանը**, որը «Հայաքվեին» է անդամագրվել, ինչ է մտածում այս ամենի մասին: «Նախ ասեմ, որ այս ընտրություններին եղավ այն, ինչ պետք է լիներ, եղավ այն, ինչ սպասելի էր: Ինչպես որ իշխանությունն է խայտառակություն, այնպես էլ իշխանության կազմակերպած ընտրությունն էր խայտառակություն: Սպասելի էր ինձ համար: Ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա ընդդիմադիր ուժերն արեցին առավելագույնը՝ այն, ինչ կարող էին անել: Եթե ութ տարի շարունակ՝ այսքան աղետներից հետո դրանք այնքան շատ են, որ ասելու չէ՝ Արցախի կորուստ, Եռաբլուր, հաշմանդամ տղաներ, սրբություններին դեմ հարձակումներ, Հայ առաքելական եկեղեցու դեմ հարձակում, հասարակության պառակտում, եւ այսպես շարունակ... եթե այս լիուլի աղետներից հետո Նիկոլ Փաշինյանը ստանում է ձայներ, իսկ սրանք ահռելի պատճառներ են, որպեսզի նա ոչ մի ձայն չստանար, ապա դա նշանակում է, որ մեծ ողբերգության մեջ է հայ ազգը: Մենք պետք է ընդունենք, որ մեր հասարակության մեջ քիչ չեն շահամոլները, չկայացածները, անտարբերները, թերհասները: Շատ ցավալի իրողություն է սա, բայց մենք պետք է ընդունենք այն: Ինչ վերաբերում է մանդատների հարցին, ապա ասեմ, որ եթե ԲՀԿ-ն անցնի, այնուամենայնիվ, իշխանության լիազորությունները պակասելու են, եւ ես կարծում եմ, որ այդ պարագայում մանդատները վերցնելը ճիշտ քայլ կլինի: Թեպետ ես անձամբ զզվել եմ նախորդ 5 տարվա Ազգային ժողովի անդաստիարակ շոուներից, սակայն ամեն դեպքում գտնում եմ, որ մանդատները պետք է վերցնել: Թեպետ նրանք ինձնից շրջահայաց են, եւ իրենք պետք է կայացնեն որոշում: Եթե Հայաստանի շահը պահանջում է վերցնել մանդատները, ապա պետք է վերցնեն, պետք է վերցնեն առանց էմոցիաների եւ կարծիքները մի կողմ թողնելով... Եթե մանդատ վերցնելը նպաստում է իրավիճակի լավացմանը, եթե այն օգտակար է, ապա չվերցնելուց լավ է՝ պետք է հաշվարկեն»: Հարցրինք նաեւ՝ իսկ Դուք սպասո՞ւմ էիք, որ այս չափի ընտրախախտումներ կլինեին: «Իսկ Դուք ուրիշ ի՞նչ էիք սպասում: Մենք միամիտ էինք, որ հավատում էինք, թե իբրեւ կարող են արդար ընտրություններ լինել: Ես էլ էի միամտաբար կարծում, որ ամեն ինչ հեշտ կլինի, բայց մի միամիտ էլ ես էի, վատ ենք ճանաչում մենք այս մարդուն, եթե կարծում ենք, որ նա հեշտությամբ իշխանություն կտա»:

Ազգային ժողովի նախագահի պաշտոնի համար թեժ մարտեր են ընթանում

Չնայած հունիսի 7-ի ընտրությունների վերջնական արդյունքները դեռ ամփոփված չեն, սակայն, մեծ հավանականությամբ, ԲՀԿ-ն անցնելու է խորհրդարան՝ «Քաղպայմանագրին» զրկելով մանդատների 3/5-ից, այսինքն՝ սահմանադրական մեծամասնությունից, ինչը հնարավորություն է տալիս ընդդիմությանը՝ մասնակցելու սահմանադրական մարմինների ղեկավարների ընտրություններին, եւ ՔՊ-ն, ըստ էության, «կաղ բադիկի» իշխանություն է հիշեցնելու:

Բայց նույնիսկ լեգիտիմության նվազ մակարդակն ու ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրության տոտալ անվստահությունը չեն խանգարում իշխանականներին՝ թեժ մարտեր մղելու առանցքային պաշտոնների համար: Իշխող ապագա ֆրակցիան դեռ չի ձեւավորվել, սակայն, մեր աղբյուրների փոխանցմամբ, արդեն իսկ բարիկադներ են կազմվել, եւ իրար դեմ պայքարում են, թե ով ինչ պաշտոն պետք է զբաղեցնի: Բնականաբար, ամենաթեժ մարտերը մղվում են Ազգային ժողովի նախագահի պաշտոնի համար՝ ամեն մի խմբավորում պայքարում է, որ այդ պաշտոնն իրենց ներկայացուցիչը զբաղեցնի:

Օրեր առաջ գրել էինք, որ մի խումբ ՔՊ-ականներ հակված են այդ պաշտոնում տեսնել նախորդ խորհրդարանում ՔՊ խմբակցության ղեկավար, Էդմոն Մարուքյանի նախկին սանիկ, ճամբարափոխ Հայկ Կոնջորյանին: Դրանք այն մարդիկ են, որոնք ատում են Ալեն Սիմոնյանին եւ ամեն ինչ ուզում են անել՝ նրանից ազատվելու համար, սակայն երեկ Ալեն Սիմոնյանի կողմնակիցները մեզ վստահեցնում էին, որ ԱԺ նախագահի պաշտոնն այս ժամկետում էլ կզբաղեցնի նա, չնայած ՔՊ ընտրացուցակում ընդամենը 14-րդ տեղն էր զբաղեցնում, իսկ Կոնջորյանը 11-րդն էր: Ալեն Սիմոնյանն անձամբ է նման հավաստիացումներ տվել իր կողմնակիցներին՝ ասելով, որ ինքը վաստակել է երկրորդ ժամկետը պաշտոնավարելու իրավունքը:

Ալեն Սիմոնյանի տարբերակն առաջ հրողների փաստարկն այն է, որ ծանր քարոզարշավի առաջին իսկ րոպեներից նա եղել է ՔՊ խրամատում, իր վրա է վերցրել ամենավտանգավոր հարվածները, ի տարբերություն մյուս հավակնորդների, որոնք իրենց վարկանիշն ավելի են կարեւորել եւ ՔՊ-ին ուղղված մեղադրանքներին պատասխանել են ըստ նպատակահարմարության: Խոսքը նախեւառաջ Հայկ Կոնջորյանի մասին է, ինչպես նաեւ՝ Լիլիթ Մակունցի, որին ընտրություններից առաջ Նիկոլ Փաշինյանը տեսնում էր ԱԺ նախագահի պաշտոնում, սակայն թիմում դիմադրում են դրան՝ նշելով, որ ծանր խորհրդարան է ձեւավորվել, եւ Մակունցի պես նուրբ ու փխրուն էակը չի կարող դրան դիմանալ: Մինչդեռ Ալեն Սիմոնյանը Փաշինյանից ոչ պակաս հարձակումներ է գործել ընդդիմության վրա, իսկ այս թիմի համար դա առաջնային է համարվում:

Խորհրդարանի խոսնակի պաշտոնի հավակնորդներից է նաեւ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը: Նա էլ պակաս չի «քլնգել» ընդդիմությանը եւ ատելության խոսք տարածել, ուստի միանգամայն արժանի է այս պաշտոնին: Սակայն նրա անհավասարակշիռ եւ հախուռն խառնվածքը անգամ թիմակիցներն են խնդրահարույց համարում: Ասում են՝ Ռուբինյանը լեզու չի գտնում նույնիսկ թիմի ներսում, ուր մնաց թե կարողանա ընդդիմադիրներին կառավարել: Բացի այդ՝ նա, իր կուսակիցների բնորոշմամբ, թիմում ամենաանպարտաճանաչ մարդկանցից է, իսկ նման մեծ հիմնարկի կառավարչի համար պարտաճանաչությունը կարեւոր հատկանիշ է: Եվ ամենակարեւորը՝ նոր ձեւավորվելիք ֆրակցիայում Ալեն Սիմոնյանը նոր աջակիցներ ունի, որոնք որոշել են հարցի քննարկման ժամանակ պնդել նրա թեկնածությունը: ԱԺ նախագահին նախ իրենք են ընտրելու՝ ՔՊ-ի ներկուսակցական քննարկման ժամանակ, ապա՝ նաեւ խորհրդարանում: Ալեն Սիմոնյանը վերջին ամիսներին հատկապես կարողացել է նվաճել ՔՊ տիկնանց սրտերը, պարբերաբար նրանց ռեստորան է հրավիրում, գործուղումների տանում, ինչի շնորհիվ էլ նրանց համակրանքն է վայելում: Առհասարակ, այս զանգվածն ուրույն չափանիշներ ունի՝ պաշտոնյաներին ընտրելիս: ՔՊ մեր աղբյուրներն այդուհանդերձ վստահեցրին, որ հարցը կուսակցությունում դեռ չեն քննարկել, Նիկոլ Փաշինյանի կարծիքը դեռ հայտնի չէ, իսկ ՔՊ-ում որոշում կայացնողը մեկ մարդ է, եւ այդ մարդը Փաշինյանն է: Եթե զգան, որ նա դեմ է Ալեն Սիմոնյանի թեկնածությանը, որոպեների ընթացքում իրավիճակ կփոխվի: Առհասարակ՝ դատելով տարբեր ցուցանիշներից, ԱԺ ՔՊ նոր խմբակցությունը «ուսապարկացման» տեսակետից ավելի վատն է լինելու, քան նախորդ խորհրդարանինը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Քաղաքական ուժերը պետք է բոլոր հնարավոր տարբերակները կիրառեն

«Հրապարակի» զրուցակիցը նախկին դատավոր **Պարգեւ Օհանյանն** է:

- Ընդդիմադիր ուժերը հայտարարել են, որ չեն ընդունում ընտրությունների արդյունքները եւ պատրաստվում են այն վիճարկել՝ նախ ԿԸՀ են դիմելու, ապա՝ Սահմանադրական դատարան, որը, ցավոք, կազմված է Նիկոլ Փաշինյանի ենթականերից: Ռոբերտ Քոչարյանի դաշինքը 2021-ին էլ էր դիմել ՍԴ՝ ընտրությունների հարցով, սակայն դիմումը մերժվեց: Ձեր կարծիքով՝ ի՞նչ պետք է անի այժմ ընդդիմությունը, Դուք ժամանակին ընդդիմության ներկայացուցիչն էիք ՍԴ-ում՝ հետընտրական հայցի քննարկման ժամանակ: Կա՞ն բավարար հիմքեր՝ ՍԴ դիմելու համար: Եթե այո, ապա որո՞նք են դրանք:

- Այս հարցին հստակ պատասխանելու համար պետք է լինել ընդդիմության «խոհանոցում» եւ հասկանալ, թե կոնկրետ ինչ խախտումներ են արձանագրվել: Մենք դրանց տիրապետում ենք այնքանով, որքանով հրապարակումներ է անում մամուլը: Եթե կան հստակ հիմքեր, ապա, իհարկե, պետք է գնալ մինչեւ վերջ: Ընտրախախտումներ արձանագրվել են, որոնք փոքր ընտրախախտումներ չեն: Օրինակ՝ թվեր են գրել սխալ, մի տեղ 700 ձայնը գրել են 7 ձայն, մի տեղ՝ հակառակը: Բնական է, որ այս դեպքում կա խնդիր, սակայն, եթե անկեղծ լինեմ, ապա իմ իրավաբանական փորձը, իմ անցած ճանապարհն ինձ հուշում են, որ Սահմանադրական դատարան դիմելը չի ունենալու որեւէ ապագա: Ես կարծում եմ, որ այդ ճանապարհով ընդդիմադիրները չեն հասնելու արդյունքի, քանի որ Արեւմուտքն արդեն տոնում է իր հաղթանակը, շնորհավորում է Նիկոլ Փաշինյանին: Բայց ես չեմ բացառում նաեւ, որ գուցե հասնեն ինչ-որ հաջողության: Եթե լինեն իրական հիմքեր, ապա՝ ինչո՞ւ չէ, գուցե ստացվի մի բան:

- Օրինակ՝ զինվորներին ժամը 20-ից հետո տեղամասեր տանելը, նախընտրական ճնշումները, օրենքները շրջանցելը այս պրոցեսի համար կարո՞ղ են հիմք լինել:

- Ժամը 20-ից հետո քվեարկելն օրենքի խախտում է, ինչպես միշտ, այս անգամ էլ խախտումներ կան, բայց ինձ թվում է՝ սրանք այն էական խախտումները չեն, որոնք կարող են հիմք հանդիսանալ: Կարող են ասել՝ մի քանի հարյուր զինվորի ձայնն անվավեր կճանաչենք, ու վերջ: Մարդկանց ակնհայտ վախի մեջ էին պահում, բայց դա էլ դժվար թե հիմք հանդիսանա, կասեն՝ մի քանի 100 հոգու վրա էլ դա է ազդել: Մեծ հաշվով, անիմաստ է ՍԴ դիմելը: Բայց, գիտեք, ես կարծում եմ, որ եթե քաղաքականության մեջ են, պետք է անեն որոշ աշխատանքներ, ամեն ինչից հրաժարվելը նույնն է, թե ի սկզբանե հրաժարվեին առաջադրվելուց, ասեին՝ միեւնույն է, իշխանությունը վերարտադրվելու է, չմասնակցենք պրոցեսին: Ցավոք, շատ քաղաքացիներ այդպես մտածեցին եւ չմասնակցեցին ընտրությանը, սակայն քաղաքական ուժերը պետք է բոլոր հնարավոր տարբերակները կիրառեն:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՆԺԱՐ

ԱՅԴ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԱՌԱՋ ԷԼ ԷԻՆ ԱՍՈՒՄ՝ ԿԱ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՃ

«Հրապարակի» զրուցակիցը «Բոլորին դեմ եմ» կուսակցության վարչապետի թեկնածու **Նինա Կարապետյանցն** է:

- Միջազգային դիտորդական առաքելությունն արձանագրել է ընտրախախտումների մի մասը, սակայն նրանց ներկայացրած եզրակացությունը բավականին մեղմ է, եւ Նիկոլ Փաշինյանի իշխանության մասին չեն ինչում այն ճշմարիտ գնահատականները, որոնք ակնկալվում էին հանրության կողմից: Ինչո՞ւ:

- Ես հիշաչար մարդ չեմ, բայց ունեմ լավ հիշողություն: Հիշում եմ, թե նրանք ինչպես էին այն ժամանակ՝ ոչ պակաս տխուր ընտրություններից հետո էլ այդ ամենը համարում դեպի ժողովրդավարություն տանող քայլեր: Անկեղծորեն, ես միջազգային կառույցներից արդեն վաղուց ոչինչ չեմ սպասում: Ես իմ հարցազրույցներում էլ ասել եմ, որ սա բացառիկ հնարավորություն է մեզ համար՝ որպես հասարակություն հասկանալու, թե ինչ ենք ցանկանում, ինչի ենք ձգտում, եւ օգտագործելու մեր հնարավորությունները: Ես խոսել եմ նաեւ միասնական ճակատի մասին, բայց երբ դու ներսում չունես ընդդիմություն, որն ի վիճակի է համագործակցել մյուս ուժերի հետ, փոխարենը տառապում է մեծամտությամբ, ապա էլ ի՞նչ կարող ենք սպասել միջազգային կառույցներից: Ընդդիմադիր ուժերին թվում է՝ հազար տարի նույն բաներն ասելով ու անելով հաջողության կարող են հասնել, բայց աշխարհում բոլոր ուժերն իրենց շահերն են փորձելու առաջ տանել, անկախ այն բանից, թե ինչ է ուզում հայ մարդը: Մենք՝ ընդդիմադիր ուժերս, պետք է մեր մեջ կարողանանք ուժ գտնել եւ լսել իրար, դրանով առաջ տանել հայկական պրոյեկտները, մնացած ամեն բան, այդ թվում՝ դիտորդական առաքելությունները, սուտ բաներ են, ոչ մեկից ոչ մի լավ բան պետք չէ սպասել:

- Այդ դեպքում ինչո՞ւ են դիտորդներն այդքան ճանապարհ անցնում եւ Հայաստան գալիս՝ ընտրությունները դիտարկելու:

- Յուրաքանչյուր կողմ ուզում է իր շահերն առաջ տանել, եւ որպեսզի կարողանան նման հայտարարություններ անել ու եզրակացություններ կազմել, պետք է ներկա գտնվեն: Այս ընտրությունների խախտումները շատ վաղուց էին սկսել: Դրանք շատ ավելի խորքային էին, քան մենք կարծում ենք, իշխանությունը երկար էր պատրաստվել: Համացանցը կարողացան կիրառել մարդկանց վախի մեջ պահելու համար, այնպես չէ, որ նախկինների նման արկղերը գողանում էին, մեջը կիլոներով ծրարներ լցնում, հիմա ամեն ինչ ուրիշ ձեւով են անում: Այժմ, ինչպես ժողովուրդն է ասում, տեղի ունեցան «ափաշքյարա» խախտումներ, սակայն դիտորդական նույն խմբերն ամեն անգամ գրեթե նույն տեքստերն են տարածում, լավ՝ հետո՞: Այդ կառույցները երկու-երեք ամիս անց նորից են տարածում եզրակացություններ, սակայն դրանք էլ ոչ մեկին հետաքրքիր չեն լինում, դա անում են, որպեսզի վերջնականապես խայտառակ չլինեն, սակայն իրականության մեջ ոչինչ չի փոխվում: Նրանք ասում են, որ Հայաստանում կա ժողովրդավարության աճ, այնպես որ՝ նրանցից շատ բան սպասել պետք չէ: Մենք պետք է ամեն մեկս մեզ վրա վերցնենք պատասխանատվություն: Ասեմ, որ այս ընթացքում ի հայտ եկան նոր բլոգերներ, նոր քաղաքացիական հասարակություն է ձեւավորվում, որոնք իրենց վրա պատասխանատվություն են վերցրել: Անկեղծ ասած, դա ինձ ավելի շատ է ուրախացնում, քան այն, որ ժամկետն անցած ինչ-որ կառույցներ հայտարարություններ են տարածում: Այդ կառույցները վաղուց իրենց դարն անցել են, նրանք իրենց սկզբունքները ո՛չ առաջ էին կատարում, ո՛չ էլ հիմա, ուղղակի տարբերությունն այն է, որ այն ժամանակ ունեինք ուժեղ քաղհասարակություն, որը հաստատապես թույլ չէր տալիս, որ այս աստիճան այլանդակ իրավիճակներ ստեղծվեին: Այս վիճակը, որ մենք հիմա ունենք, դրանում այնքան մեղավոր չէ Փաշինյանը, որքան՝ քաղհասարակությունը: Հակակշիռ չունեցող ցանկացած քաղաքական ուժ դառնում է Փաշինյանի նման, բայց մեղավորը նրան սատարող քաղհասարակությունն է, որը չտեսնելու տվեց հանցագործությունների շղթան: Այդ նրանք են Նիկոլ Փաշինյանին դարձրել մոնստր:

Նյութերը՝
Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՍԵԴՐԱԿՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ «ՍԱՌԵՑՐԵԼ» ԵՆ



Ազգ ՀՀԿ-ական նախկին պատգամավոր, Էրեբունու նախկին համայնքապետ Միհեր Սեդրակյանի՝ Թոխմախի Միհերի դեմ 2019-ին հարուցվել էր քրեական գործ՝ «Վարդավառ» զբոսայգու տարածքների օտարման եւ պաշտոնի չարաշահման առիթով: Ըստ Քննչական կոմիտեի՝ նա չէր կանխել որդու եւ եղբոր կողմից իրականացված ինքնակամ շինարարությունը, իսկ հետագայում համայնքային հողատարածքներ էր օտարել նրանց՝ դրանք դուրս բերելով համայնքի սեփականությունից: 2020-ին գործի նախաքննությունն ավարտվել է եւ ուղարկվել դատարան: Նրա որդու՝ Դավիթ Սեդրակյանի նկատմամբ էլ նախաձեռնվել էին քաղաքացիական վարույթներ: 2025 թվականին Գլխավոր դատախազությունը Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան հայց է ներկայացրել Դավիթ Սեդրակյանին պատկանող «Բիդեք» ՍՊԸ-ի դեմ՝ պահանջելով, որ դատարանը դադարեցնի հողամասի կառուցապատման իրավունքը: Բացի այդ, Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանում քննվում է նաեւ Միհեր Սեդրակյանի եւ նրա ընտանիքի ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործը: Ըստ դատախազության, վիճարկվում են Սեդրակյանների իրականացրած մի շարք գույքային գործարքներ:

Այսպիսով, Միհեր Սեդրակյանի անվան հետ վերջին տարիներին կապվել է ինչպես պաշտոնական լիազորությունների չարաշահման գործ, այնպես էլ նրա եւ ընտանիքի գույքի ու բիզնես ակտիվների առնչությամբ քաղաքացիական եւ հակակոռուպցիոն դատավարություններ: Թերեւս այս քրեական եւ քաղաքացիական վարույթներն են պատճառը, որ, ըստ որոշ տեղեկությունների, Միհեր Սեդրակյանն ու նրա որդին՝ Դավիթը, այս ընտրություններին ջանասիրաբար աշխատել են ՔՊ-ի համար:

Նախկին պատգամավորի 2019 թ. քրգործը, նրա ընտանիքին առնչվող ապօրինի ծագում ունեցող գույքի ու դրամական միջոցների բռնագանձման գործը դատարաններում «լռված» են: Տարիներով քննվում են առաջին ատյանում եւ վճիռներ չկան: Ակնհայտորեն, սուրը նրանց գլխին պահում են, որ ընդդիմությանը չաջակցեն: Իսկ Դավիթ Սեդրակյանը, հիշեցնենք, 2021-ին «Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածու էր եւ կարող էր մանդատ վերցնել, սակայն հրաժարվեց ու սկսեց կառուցապատմամբ զբաղվել՝ բազմամիլիոն դրամաշնորհներ շահելով:

Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանում, որտեղ քննվում է Սեդրակյանի ընտանիքի գույքերի ապօրինի ծագման հետ կապված հայցը, ինֆորմացիան «Դատալեքս» դատական-տեղեկատվական համակարգում փակվել է: Ինչո՞ւ, ո՞րն է պատճառը՝ հարցրինք հակակոռուպցիոն դատարանների խոսնակ Արմինե Նովրուզյանին. «Պատասխանող կողմի դիմումի համաձայն, փակվել է ինֆորմացիան Դատալեքսում»: Իսկ Սեդրակյանների պաշտպան Ալեքսան Խաչատրյանն ասաց. «Ներկայացրել ենք դիմում՝ Դատալեքսում տեղեկատվությունը սահմանափակելու հետ կապված, քանի որ դատաքննության ընթացքում ներկայացվում են տարբեր դիրքորոշումներ, որոնց վերաբերյալ կայացվող որոշումները տեղադրվում են Դատալեքսում, եւ որոնք կարող են վերաբերել մարդկանց անձնական կյանքին, ընթացիկ որոշումների մասին է խոսքը, դրանով զուտ Դատալեքսում տեղեկատվությունը սահմանափակելու հետ կապված դիմում ենք ներկայացրել, որոնք որ կատարված են, իմ իմանալով՝ շատ գործերով»: Հետաքրքիր է՝ եթե որեւէ այլ անձ նման դիմում տա, նրա հետ կապված ինֆորմացիան ճիւս կփակեն Դատալեքսում:

Փաստաբանը նշեց նաեւ, որ բոլոր գործերն ընթացքի մեջ են, շարունակվում են: Իսկ ինչո՞ւ է 6 տարի շարունակ քննվում քրեական գործը, սակայն դատավճիռ չկա: Ասաց, որ իրեն էլ է այդ հարցը հետաքրքրում. «Մենք էլ ենք շահագրգռված, որ որքան հնարավոր է, այդ գործը շուտ ավարտվի, մի ընթացք հետաձգվել էր, փորձաքննություն էր նշանակվել»: Իսկ թե ինչ փորձաքննություն էր, ինչ եզրակացություններ են եղել, ասաց, որ կճշտի, կասի:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԵՊՀ-ում քաղաքական հաշվեհարդար են սկսել

Երեկ տեղեկացանք, որ ԵՊՀ ռեկտորատից Եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատարին տեղեկացրել են, որ լուծարվում է մայր բուհի Արտասահմանյան գրականության ամբիոնը, որը ԵՊՀ ամենահին ու կարեւոր ամբիոններից է: Ամբիոնը ղեկավարել է քաղաքագետ **Անուշ Սեդրակյանը**, որն ընտրություններին մասնակցում էր «Միասնության թեւեր» կուսակցության ցուցակով: Սեդրակյանը, որն ընդդիմադիր քաղաքական գործիչ է եւ քննադատում է Փաշինյանին ու այս իշխանություններին, մեզ հետ զրույցում հավաստիացրեց, որ այս որոշումը կապված է իր ընդդիմադիր քաղաքական հայացքների եւ իշխանություններին սուր քննադատության ենթարկելու հետ. «Դեկանին տեղեկացրել են, որ առաջիկա գիտական խորհրդին դրվելու է մեր ամբիոնը ցրելու հարցը, եւ տարբեր ակնարկներով հասկացրել են, որ այդ որոշումը կապված է իմ քաղաքական հայացքների հետ, քանի որ ես ընդդիմադիր եմ, դա է պատճառը: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է համալսարանն առանց արտասահմանյան գրականության ամբիոնի շարունակելու իր գործունեությունը: Անգամ ինձ տեղյակ չեն պահել այս մտադրության մասին, սակայն ասել են, որ ես տեղյակ եմ այդ ամենից: Ես որտեղի՞ց պետք է տեղյակ լինեի, հավանաբար՝ նրանից, որ ինձ տարբեր օղակներով փոխանցում էին, որ դադարեցնեմ քաղաքականությամբ զբաղվելը»:

Տեղեկացանք նաեւ, որ ամիսներ առաջ աշխատանքից ազատել են ԵՊՀ Եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի դեկան Գեւորգ Բարսեղյանին՝ ընդդիմադիր քաղաքական հայացքների պատճառով: Նա ուսանողների շրջանում սիրված դեկան է եղել տարիներ շարունակ: Նա մտերիմ հարաբերություններ ուներ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հետ, սակայն ԵՊՀ-ն այն աստիճան է ՔՊ-ականացվել, որ ռեկտորին ինչ հրահանգում են, խելոք կատարում է, առանց ընդվզելու, եւ անգամ իր մտերիմներին չի կարողանում փրկել ՔՊ-ական հաշվեհարդարներից:

Եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի դեկանի ԺՊ է նշանակվել Մարինե Յաղուբյանը: Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանի իշխանավարման այս ութ տարիներին տարբեր բուհերից, այդ թվում՝ ԵՊՀ-ից, բազմաթիվ դեկաններ եւ դասախոսներ են հեռացվել՝ իշխանությանը քննադատելու կամ սեփական կարծիք ունենալու համար:

ՑՍԼՍՓ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ ՉԿԱ, ԲԱՅՑ ԿԼԻՆԻ

Հայաստանում հայտնվել են արմատական հեղափոխականներ, որոնք պահանջում են հեղափոխություն հենց հիմա՝ ոչ մի վայրկյան ուշացում: Ընդդիմությանը մեղադրում են վախկոտության, դանդաղկոտության, իշխանությանը ծախվելու կամ պայմանավորվելու մեջ, սպառնում են, որ եթե հիմա հեղափոխություն՝ իշխանափոխություն չանեն, հասարակությունը կհիասթափվի ընդդիմությունից, կդառնա այդ ընդդիմության ընդդիմությունը եւ այլեւս երբեք չի ների իրենց խաբած ուժերին: Մի մասն անկեղծ է, ուզում է արագ ազատվել նողկալի իշխանությունից, մի մասն ուղղորդված է, չեմ բացառում, որ հենց նույն իշխանության կողմից: Այդպես եմ մտածում, որովհետեւ համոզված եմ, որ Հայաստանում այս պահին չկա հեղափոխական իրավիճակ, եւ եթե այս պահին ընդդիմությունը ֆալշ ստարտ տա, փորձի հեղափոխություն-իշխանափոխություն անել եւ ձախողվի, հետո այլեւս չի կարողանա կոտրված եւ հուսալքված հասարակությանը ոտքի հանել: Փաշինյանը կցանկանա, որ ընդդիմությունը հիմա նման փորձ անի եւ տապալվի, որովհետեւ ինքն էլ գիտի, որ առաջիկայում երկրում նոր, անհամեմատ ավելի արմատական եւ հեղափոխական իրավիճակ է ձեւավորվելու:

Իմ ավագ ընկեր, տաղանդավոր արձակագիր Լեւոն Ջավախյանն առաջին տեսակն է, որ անկեղծորեն ուզում է՝ երկիրը րոպե, վայրկյան առաջ ազատվի այս աղետից. նա իր սոցիալական ցանցի հարթակում գրում է. «Երկաթը տաք-տաք են ծեծում: Սառչող երկաթը մեռածն է… Ժողովրդին ոտքի հանեք կամ հրաժարվեք ձեր մանդատներից… Ազգը ոչ լեգիտիմ Ազգային ժողովի կարիքը չունի»: Լեւոնը՝ որպես անկեղծ մարդ եւ մտավորական, արտահայտում է մեր հասարակության հույզերն ու սպասումները, մի քիչ էլ՝ հիասթափությունն ընդդիմությունից: Երկաթը, իհարկե, տաք-տաք են ծեծում, բայց արդյո՞ք այս պահին երկաթը տաք է կամ բավականաչափ տաք է, որ այն ծեծեն: Ավելի պարզ ասած՝ արդյո՞ք երկրում հասունացել է հեղափոխական իրավիճակ, երբ ընդդիմության կոչով հարյուր հազարավոր մարդիկ դուրս կգան փողոցներ ու կսրբեն անօրինական եւ անօրեն իշխանությունը:

Հեղափոխության մեծ տեսաբան եւ պրակտիկ Վլադիմիր Ուլյանով-Լենինը, խոսելով հեղափոխության իրականացման հարմար պահի ընտրության՝ հեղափոխական իրավիճակի ձեւավորման մասին, կուսակցության կենտրոնական կոմիտեին ուղղված իր նամակներից մեկում գրել էր. «Երեկ դեռ շուտ էր, վաղը ուշ կլինի, ուրեմն՝ այսօր»: Թվում է, մեր հեղափոխության այսօրն էլ է հիմա, երբ հասարակությունը վրդովված եւ ըմբոստացած է ապօրինի եւ կեղծված ընտրությունների դեմ, երբ մարդկանց մի մասը մտածում է, որ Փաշինյանը կեղծել է հասարակության ընտրությունը՝ իր ուժային լծակները եւ ձեռնասուն ԿԸՀ-ն օգտագործելով, ինքն իրեն հռչակել է հաղթած եւ պատրաստվում է բռնազավթել իշխանությունը: Մի՞թե սրանից ավելի հարմար պահ կարող է լինել, հնարավոր է, որ մենք կորցնում ենք ամենաթանկ ժամանակը, երբ այլեւս կարող է ուշ լինել, մանավանդ որ կողքից էլ բազմաթիվ մարդիկ ընդդիմությանը դրդում են գործել արագ եւ վճռական: Էլ սրանից ավել ի՞նչ պետք է լինի, որ ընդդիմությունը հասարակությանն ըմբոստության կոչ անի:

Ինչո՞ւ եմ կարծում, որ հեղափոխական իրավիճակ դեռ ձեւավորված չէ, եւ երբ այն կձեւավորվի: Այդ հարցին պատասխանելուց առաջ մի հիշեցում եւս. բոլորի, այդ թվում եւ մեզնով հետաքրքրվող աշխարհի համար Հայաստանում տեղի ունեցած ընտրությունները բնորոշում էին ոչ միայն սոսկ կառավարիչների, այլեւ ավելի շատ երկրի արտաքին քաղաքական կուրսի ընտրություն, ընտրություն Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ, եւ պատահական չէ, որ ԵՄ անդամ երկրների եւ ԵՄ կառույցների ղեկավարները, շնորհավորելով կեղծ ընտրությունների արդյունքում ինքն իրեն հաղթող հռչակած Փաշինյանին, ասում էին, թե Հայաստանն ընտրեց եվրոպական զարգացման ուղին, իսկ Ռուսաստանի իշխանությունն ընտրություններից օրեր անց անգամ հրաժարվում է շնորհավորել Փաշինյանին:

Նախընտրական շրջանում Ռուսաստանը, Հայաստանի արտաքին կողմնորոշումը փոխելու ակնկալիքով, տնտեսության եւ տնտեսվարողների դեմ բազմաթիվ սահմանափակումներ կիրառեց, որոնցից տուժում են տասնյակ եւ հարյուր հազարավոր մարդիկ եւ շարունակելու են տուժել: Այդ սահմանափակումներն ուղղված էին առաջին հերթին Փաշինյանի կողմից իրականացվող քաղաքականության դեմ, հասարակությանը համոզելու, որ նա երկիրը սխալ ուղղությամբ է տանում, դրանից Հայաստանը չի շահելու: Բայց Փաշինյանին հաջողվեց հասարակության զգալի մասին համոզել, որ, առաջին՝ այդ սահմանափակումները ժամանակավոր են, ընտրություններից հետո Ռուսաստանը կհամակերպվի իր իշխանության գոյության փաստի հետ, եւ իրեն կհաջողվի պայմանավորվել նախագահ Պուտինի հետ՝ չեղարկելով սահմանափակումները եւ արգելքները: Երկրորդ. այդ սահմանափակումները պատճառ կդառնան, որ ԵՄ-ն եւ աշխարհն իրենց շուկաները բացեն հայ արտադրողների առաջ, եւ նրանք կկարողանան իրենց ապրանքը վաճառել ԵՄ ավելի մեծ ու գնողունակ շուկայում: Երրորդ. ԵՄ-ն օգնություն եւ փոխհատուցում կտրամադրի ռուսական սահմանափակումներից տուժած ֆերմերներին եւ տնտեսվարողներին:

Արմավիրի մարզի բազմաթիվ գյուղեր, որոնց արտադրած խաղողը կամ խաղողից ստացվող կոնյակն արտահանվում է բացառապես Ռուսաստան, մեծամասամբ ընտրել էին Փաշինյանին, ընտրել էին ոչ միայն վախի կամ սպառնալիքի ազդեցության տակ, այլեւ հավատացել էին, որ ավելի լավ է լինելու: Իսկ որ ավելի լավ չի լինելու, ընդհակառակը՝ ավելի վատ է լինելու, այդ մարդիկ եւ հարյուր հազարավոր նրանց նմանները համոզվելու են աշնանը, երբ երկրի տնտեսական վիճակը գնալով վատանա, երբ տեսնեն, որ լավ ապրելու փոխարեն ավելի վատ են ապրում, կորցնում են աշխատանք ու եկամուտ, երբ Ռուսաստանը մի բան էլ գազի գինը բարձրացնի, եւ դա հանգեցնի

ահռելի գնաճի ու աղքատության: Այ, հեղափոխական իրավիճակն այդ ժամանակ է լինելու, եւ այդ ժամանակ գուցե ընդդիմության կոչն էլ պետք չլինի, որ մարդիկ դուրս գան փողոց՝ նաեւ այն մարդիկ, ովքեր հավատացել էին Փաշինյանի եվրոպական խոստումներին: Համոզված եմ, որ հենց այդ հեռանկարն աչքի առաջ ունենալով է, որ Փաշինյանն ուզում է, որ հետընտրական զարգացումները լինեն հենց հիմա, ամռանը, որ կարողանա դա խեղդի բռնության միջոցով, որովհետեւ աշնանը եւ ձմռանը նույնիսկ բռնություն կիրառողներին վճարելու փող կարող է չունենալ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԼԱՎ ՀԱՇՎԻՐ, ՈՐ ՔԵԶ ՉՀԱՇՎԵՆ

Ռուսամ՝ Վահագն Հովակիմյանն իր խոսքի տերն է լինելու եւ դատի է տալու բոլորին, ովքեր կփորձեն կեղծ թվեր հրապարակել ընտրությունների արդյունքների մասին եւ մոլորեցնել հանրությանը: Պարոն Հովակիմյան, ես մի հարց կուզենայի պարզել. ե՞րբ եք դատի տալու եւ դատի տալո՞ւ եք, արդյոք, նրանց, ովքեր հանդգնել են թվակեղծարարություն անել դեռ ԿԸՀ-ի կողմից նախնական արդյունքների հրապարակումից առաջ: Ես, օրինակ, ճանաչում եմ մեկին, որ հունիսի լույս 8-ի գիշերը, երբ տեղամասերի 10 տոկոսի արդյունքներն էին միայն ամփոփվել, մամուլի ասուլիս տվեց ու հայտարարեց, որ ինքը 54 տոկոս ձայն է հավաքել: Դիցուք՝ այս մարդուն դատի տալո՞ւ եք, պարոն Հովակիմյան, թե՞ փորձելու եք շրջանցել այս խայտառակությունն ու ընկնել լրագրողների հետեւից, որ, ասացեք խնդրեմ, որոշ անճշտություններ են թույլ տվել իրենց հրապարակած թվերում:

Պարոն Հովակիմյան, իրականում տեղի է ունեցել մի մեծ խայտառակություն: Վրաստանի վարչապետ Կոբախիձեն, Ֆրանսիայի նախագահ Մակրոնը, պատկերացնո՞ւմ եք, ՀՀ ԿԸՀ նախագահից ավելի շուտ են իմացել, որ Նիկոլը «կրել է» այս ընտրություններում, եւ շնորհավորել են Նիկոլին: Ինչպե՞ս կբացատրեք այս անոմալիան, չէ՞ որ դուք եք այն մարդը, որ առաջինն է իմանում ընտրություններում այս կամ այն ուժի հաղթանակի մասին: Մակրոնն ինչքան էլ շատ սիրի Նիկոլին, Ձեզնից ավելի շատ չի կարող սիրել, այդպես չէ՞: Եվ, ուրեմն, ինչպե՞ս պատահեց, որ նա Ձեզնից շուտ շնորհավորեց Ձեր շեֆին, այն էլ՝ ընտրություններում տարած վստահ հաղթանակի կապակցությամբ:

Երկրորդ մարդը, պարոն Հովակիմյան, որին պետք է դատի տալ, չզարմանաք, Դուք եք: Բացատրեմ՝ ինչու: Ուրեմն, տեսնելով ընտրատեղամասերից ստացված առաջին արդյունքները, հասկանալով, որ նույնիսկ պարզ մեծամասնություն չեն կարողանում կազմել, ՔՊ-ն անցավ գործի: Ես ասեմ՝ ՔՊ-ն, դու հասկացիր՝ Նիկոլը: Եվ, ուրեմն, Նիկոլն անցավ գործի… Ի՞նչ է հրահանգել Նիկոլն անձամբ քեզ, պարոն Հովակիմյան, կարո՞ղ ես ասել, եթե գաղտնիք չէ: Նա որեւէ հրահանգ չի՞ տվել, չի՞ ասել՝ Վահագ, վիզդ կպոկեմ, եթե 3/5 կամ 2/3 չունենանք, ֆայլաբազարից մարդ կբերեմ, կնշանակեմ ԿԸՀ նախագահ: Ո՞չ: Այդ դեպքում՝ ավելի վատ քեզ համար, պարոն Հովակիմյան, Նիկոլը կգնա քնելու, իսկ դու կգնաս աշխատանքային գաղութ՝ կամայական թվանկարչության հոդվածով: Մի քիչ արագ կողմնորոշվիր, Վահագ, ժամանակը քո դեմ է աշխատում: Նորից կրկնեմ՝ տեղի է ունեցել խայտառակություն, փոխանակ Նիկոլը հետեւի ԿԸՀ-ի հաշվարկներին, դուք եք հետեւել Նիկոլի հայտարարություններին: Երկուսդ էլ հավասարապես ք.քի մեջ եք, դա չէ հարցը, ուղղակի պետք է հիմա պարզել՝ դու, պարոն Հովակիմյան, ք.քի մեջ ես ընկել Նիկոլի հրահանգո՞վ, թե՞ կամովի՝ Նիկոլի, հետեւաբար նաեւ սեփական պաշտոնի սիրուց դրդված:

Կարծիք կա, պարոն Հովակիմյան, որ ԲՀԿ-ի շուրջ լուրջ «բազարներ» են ընթացել՝ թողնել խորհրդարան, չթողնել: Սա ի՞նչ նոր բան է, դո՞ւք պիտի որոշեիք այդ հարցը: Զադնի-պերեդնի, զադնի-պերեդնի… Մի հատ կողմնորոշվեք՝ դո՞ւք եք որոշողը, թե՞ ԲՀԿ-ի ընտրազանգվածը: Ընդամենը երկու տեղամաս բացեցին, պարզվեց՝ ԲՀԿ-ն անցել է խորհրդարան, ինչի արդյունքում ՔՊ-ն 4 աթոռ է կորցրել: Եվ ես պատկերացնում եմ, թե դեռ ինչեր կպարզվեն, եթե բոլոր 2005 տեղամասերը բացվեն:

Նորմալ երկրներում, Վահագ ջան, այդ երկրների առաջնորդներն ու ԿԸՀ նախագահները տեղում հրաժարականի դիմում կգրեին: Դու եկել, գիտությունով ես չալում, թե բա՝ «տող է թռել», Նիկոլը թառել ամբիոնին՝ հաթաթա է տալիս Գագիկ Ծառուկյանին՝ կնստացնեմ, «ստոյկա կտաս», ֆլան-ֆստան: Չեք կարողանում մարսել 4 աթոռի կորուստը, այո՞: Եվ ոչ միայն դա… Ե՞րբ պիտի հրապարակեք ընտրությունների վերջնական արդյունքները: Խորհուրդ եմ տալիս դա անել համապարփակ ձեւով, այսինքն՝ ըստ կուսակցությունների եւ դաշինքների հրապարակեք ե՛ւ նախնական արդյունքները, ե՛ւ փոփոխված: Ես մեծ ցանկություն ունեմ լսելու թե՛ իրական եւ թե՛ նկարված թվերը: Ուզում եմ դրանք համեմատել, որպեսզի հասկանամ, թե ինչ բոյի է եղել 2026-ի ընտրություններում արձանագրված խայտառակությունը: Ընդդիմադիրներից հարյուրավոր ձայներ են կորել, հազարավոր ձայներ հավելագրվել ՔՊ-ին. չիմանամ՝ ով է արել, ինչու է արել, ինչպես է արել, մենա՞կ է արել, թե՞ հրահանգով: Ու մեկ էլ իմացիր, հարգելի Վահագն Հովակիմյան, ինչ էլ լինի՝ Նիկոլը չի ընդունելու, որ ընտրակեղծարար է: Այնպես որ, պատրաստվիր՝ այս գործում «կրայնին» դու ես:



Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԳՅՈՒՄՐԻ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԻ ՆԵՐԵԼ ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԻՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ ԴՐՍԵՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Չէի կարող պատկերացնել, որ այն երկիրը, որտեղ ես վարչապետ եմ, մասնավորապես (Գյումրու) 58 թաղամասում կարող են լինել այդպիսի փողոցներ, բակեր»,- կառավարության նիստում ասել է Նիկոլ Փաշինյանը եւ հավելել, որ Գյումրիում հնարավորինս արագ պետք է արտահերթ ընտրություններ կազմակերպել: Մի քանի հարց ուղղեցինք Շիրակի մարզից «Հայաստան» խմբակցության պատգամավոր ընտրված **Միեր Մելքոնյանին**:

- Այս ընտրությունների արդյունքները դեռ չամփոփված, Փաշինյանը խոսում է Գյումրիում արտահերթ ընտրությունների մասին:

- Նիկոլ Փաշինյանի այդ հայտարարությունը փաստացի ազդարարեց նոր քաղաքական արշավի սկիզբը, որի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքում իշխանության լիարժեք վերահսկողության հաստատումն է: Քաղաքական գործընթացներին հետեւող յուրաքանչյուր մարդու ակնհայտ է, որ իշխանությունը սպասելու է՝ ավարտվեն հունիսի 7-ի ընտրությունների հետ կապված բոլոր իրավական ընթացակարգերը, ներառյալ Սահմանադրական դատարանում հնարավոր քննությունները եւ վերջնական որոշումները: Իսկ դրանից հետո, ըստ ամենայնի, գործի են դրվելու պետական եւ կուսակցական ողջ ռեսուրսները՝ Գյումրիում ցանկալի քաղաքական արդյունք ապահովելու համար: Խնդիրը միայն Գյումրին չէ, շատ ավելի խորն է: Խնդիրը գործող իշխանության քաղաքական մտածողությունն է, որը վերջին տարիներին ավելի ու ավելի հաճախ է դրսեւորվում մեկ վտանգավոր սկզբունքի տեսքով. այն ամենը, ինչ չի գտնվում իշխանության վերահսկողության ներքո, պետք է ենթարկվի, իսկ այն, ինչ չի ենթարկվում, պետք է վերափոխվի կամ վերացվի քաղաքական դաշտից: Գյումրիում 2025 թ. մարտի 30-ին տեղի ունեցած ընտրությունները քաղաքական սովորական իրադարձություն չէին: Դրանք դարձան կարեւոր քաղաքական ուղերձ՝ գործող իշխանությանը, եւ ցույց տվեցին, որ նույնիսկ իշխանական հսկայական ռեսուրսների, պետական քարոզչամեքենայի եւ վարչական լծակների պայմաններում հասարակությունը կարող է կայացնել իշխանության համար անցանկալի որոշում: Սակայն Նիկոլ Փաշինյանի քաղաքական վարքագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս մեկ կարեւոր առանձնահատկություն. նա չի ընդունում քաղաքական անհաջողությունները, որպես ժողովրդավարական գործընթացի բնական արդյունք: Վերջին 8 տարիներին մենք բազմիցս տեսել ենք, թե ինչպես է ցանկացած քաղաքական դիմադրություն, ցանկացած ինքնուրույն կարծիք, ցանկացած ընդդիմադիր կենտրոն հայտնվել իշխանության թիրախում: Հենց այդ պատճառով այսօր դժվար է չտեսնել ակնհայտը:

- Կարծում եք՝ չի՞ հաշտվել այն մտքի հետ, որ Գյումրին մերժել է ՔՊ-ին:

- Հանրապետության երկրորդ քաղաքի նկատմամբ իշխանության ցուցաբերած բացառիկ հետաքրքրությունը պայմանավորված չէ միայն տեղական ինքնակառավարման խնդիրներով: Պայմանավորված է քաղաքական ռեւանշի ձգտումով: Տպավորություն է ստեղծվում, որ Փաշինյանը չի ներել գյումրեցիներին՝ քաղաքական կամք դրսեւորելու համար, եւ այժմ պատրաստվում է վերադառնալ՝ փոխելու այն արդյունքը, որը չհամապատասխանեց իր սպասումներին: Ժողովրդավարության կարեւորագույն սկզբունքն այն է, որ իշխանությունը պետք է հարգի ընտրության արդյունքը, անկախ նրանից՝ այն ձեռնտու է իրեն, թե՝ ոչ: Հակառակ դեպքում, ընտրությունները վերածվում են ոչ թե ժողովրդավարական մեխանիզմի, այլ՝ իշխանության համար ցանկալի արդյունք ստանալու գործիքի: Վերջին տարիներին Հայաստանում ձեւավորվել է վտանգավոր քաղաքական միտում: Իշխանությունը փորձում է աստիճանաբար վերացնել քաղաքական բազմակարծության եւ ինքնուրույնության բոլոր օջախները՝ դրանք փոխարինելով մեկ քաղաքական կենտրոնից կառավարվող համակարգով: Այս տրամաբանության մեջ համայնքներն այլեւս չեն դիտարկվում որպես ինքնուրույն կառավարման միավորներ, դիտարկվում են որպես կուսակցական ազդեցության տարածքներ: Հետեւաբար, այս պայքարը ոչ թե համայնքի զարգացման, այլ քաղաքական վերահսկողության համար է: Իշխանության համար կարեւոր չէ միայն հաղթելը: Կարեւոր է ցույց տալ, որ Հայաստանում չի կարող գոյություն ունենալ որեւէ խոշոր քաղաքական կենտրոն, որը չի գտնվում ՔՊ-ի ազդեցության ներքո: Սա արդեն ոչ թե ընտրական, այլ համակարգային խնդիր է: Ժողովրդավարական պետությունում իշխանությունը մրցակցում է այլ քաղաքական ուժերի հետ: Այստեղ առաջանում է սկզբունքային հարց. արդյո՞ք տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ծառայեն համայնքի շահերին, թե՞ վերածվեն իշխող կուսակցության քաղաքական ազդեցության գործիքների: Սակայն ամենավտանգավորը նույնիսկ արտահերթ ընտրությունների հնարավոր անցկացումը չէ, այլ իշխանության վերաբերմունքը երկրի առջեւ կանգնած իրական մարտահրավերների նկատմամբ: Հայաստանը շարունակում է ապրել ծանր անվտանգային միջավայրում: Սահմանների անվտանգությունը շարունակում է մնալ խիստ խոցելի: Տնտեսությունը կանգնած է լուրջ կառուցվածքային խնդիրների առջեւ: Ժողովրդագրական պատկերը գնալով վատթարանում է: Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանը հայտնվել է աննախադեպ անորոշությունների պայմաններում: Ոտնահարված է ժողովրդավարությունը. վկան՝ վերջին ընտրությունները: Սակայն իշխանության վարքագիծը ստեղծում է մի վտանգավոր տպավորություն, թե երկրում ամեն ինչ բնականոն է, որեւէ լուրջ խնդիր գոյություն չունի, առաջնային հարցը Գյումրիում քաղաքական վերահսկողության հաստատումն է: Երբ պետությունը բախվում է գոյաբանական մարտահրավերների, իսկ իշխանությունը կենտրոնանում է ներքաղաքական հաշվեհարդարների եւ քաղաքական ազդեցության ընդլայնման վրա, առաջանում է պետական կառավարման առաջնահերթությունների խոր ճգնաժամ:

- Ի՞նչ կասեք այս ընտրությունների մասին:

- Այսօր Հայաստանի առջեւ ծառացած է ոչ միայն քաղաքական, այլեւ արժեքային ընտրություն: Մենք պետք է հստակ հասկանանք՝ ուզո՞ւմ ենք կառուցել պետություն, որտեղ իշխանությունը հարգում է ժողովրդի կամքը, թե՞ համակարգ, որտեղ ժողովրդի կամքն ընդունելի է միայն այն դեպքում, երբ համընկնում է իշխանության շահերի հետ: Ժողովրդավարության իրական չափանիշը հաղթանակի պահին պահվածքը չէ, այլ՝ պարտության նկատմամբ վերաբերմունքը: Եթե իշխանությունը չի հարգում այն ընտրությունը, որը կատարել է ժողովուրդը, ապա որքան էլ բարձր հայտարարեն ժողովրդավարության մասին, դրանք կորցնում են իրենց բովանդակությունը: Վերջին ընտրությունների շուրջ ծավալվող զարգացումները հենց այդ հարցն են դնում Հայաստանի քաղաքական օրակարգի կենտրոնում. արդյո՞ք մեր երկրում ժողովրդավարությունը շարունակում է մնալ արժեք, թե՞ աստիճանաբար վերածվում է քաղաքական կարգախոսի: Պետք է հստակ արձանագրել մի սկզբունքային հանգամանք. գյումրեցին արդեն կատարել է իր ընտրությունը: Նա իր քվեով ձեւավորել է տեղական իշխանություն եւ արտահայտել է իր քաղաքական կամքը: Սա ժողովրդավարության հիմնարար սկզբունքն է, որը չի կարող վերանայվել քաղաքական նպատակահարմարության կամ իշխանական ցանկությունների հիման վրա: Հետեւաբար, ցանկացած գործընթաց, որը դուրս կգա օրենքի, ժողովրդավարական նորմերի եւ քաղաքական բարեվարքության շրջանակներից ու կդիտարկվի որպես Գյումրիում ձեւավորված իշխանությունը քաղաքական կամ վարչական ճնշումների միջոցով փոխելու կամ զավթելու փորձ, պետք է ստանա ոչ միայն իրավական, այլեւ հստակ քաղաքական գնահատական: Որեւէ իշխանություն իրավունք չունի կասկածի տակ դնել ժողովրդի ազատ կամարտահայտության արդյունքները՝ միայն այն պատճառով, որ դրանք չեն համապատասխանում իր քաղաքական շահերին:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՆՉ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Լեւադա կենտրոնի» անցկացրած սոցհարցումների համաձայն, ռուսաստանցիների հետաքրքրությունը Ուկրաինայի շուրջ ընթացող զարգացումների հանդեպ, շարունակական նվազումից հետո, սկսել է աճել: Մայիսին ուկրաինական զարգացումներով հետաքրքրված է եղել հարցվածների 45 տոկոսը: Ընդ որում՝ շատ ուշադիր հետեւել է 15, բավականին ուշադիր՝ 30 տոկոսը: Ռուսական բանակին աջակցություն հայտնել է հարցվածների 74 տոկոսը: Ընդ որում, 42 տոկոսը հայտարարել է, որ որոշակիորեն աջակցում է ռազմական գործողություններին, 32 տոկոսը հայտարարել է, որ ավելի շուտ աջակցում է ռազմական գործողություններին:

Իսկ հունիսին, մայիսի սոցհարցման համեմատ, այս ցուցանիշն աճել է 6 տոկոսով: Ռազմական գործողություններին չի աջակցել հարցվածների 17 տոկոսը: Անցյալ ամսվա համեմատ այս ցուցանիշը նվազել է 4 տոկոսով: Սոցիոլոգներն արձանագրում են, որ ավելացել է այն անձանց տեսակարար կշիռը, ովքեր կողմնակից են ռազմական գործողությունները շարունակելուն: Մայիսին այն կազմել է 30 տոկոս, մարտին՝ 6 տոկոսով պակաս: Բանակցությունների օգտին հանդես է գալիս հարցվածների 60 տոկոսը: Սակայն այս ցուցանիշը եւս սկսել է նվազել: Հարցվածների 54 տոկոսի կարծիքով, հակամարտությունը կարող է վերաճել Ռուսաստան-ՆԱՏՕ դիմակայության: Հակառակ կարծիքին է հարցվածների 31 տոկոսը: Nezigar կայքի վերլուծաբանի կարծիքով, ուկրաինական պատերազմի նկատմամբ ուշադրության աճը պայմանավորված է ռուսական ռեգիոններին հաճախակի հասցված հարվածներով, որոնք իրականացվում են հրթիռների կամ ԱԹՍ-ների կողմից: Հասարակության մեջ պատերազմը սկսել է արդեն ավելի ու ավելի շատ ընկալվել որպես գոյաբանական առճակատում, մինչդեռ, պատերազմի քաղաքական կարգավորմանը հավատացողների թիվը սկսել է նվազել: Ուշագրավ է այն, որ հատկապես մեծ է հետաքրքրությունը թիկունքում կատարվողի, քան պատերազմական առաջնագծում ծավալվող մարտերի նկատմամբ: Հասարակությունը նաեւ հոգնած է, հոգեբանորեն հյուծված՝ անկախ ամեն ինչից, որքան էլ իշխանությունները փորձում են ամեն կերպ համախմբված ներկայացնել:

*Հարցազրույց ռեժիսոր **Վահան Խաչատրյանի** հետ*

ԵԹԵ ԴՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՍ ՎԵՐՑՐԵԼ՝ ԼԻՆԵԼ ՍԻՐՏԸ, ԿՆԵՐԵՔ, ՉԵՍ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱՄՈՐՁԻՆԵՐԸ

- Ընտրություններ եղան, թվում էր՝ հասարակությունը փոփոխություն է ուզում, բայց երկրի քաղաքական դիմագիծը մնաց նույնը: Որպես արվեստագետ՝ ի՞նչ մտորումներ ունեք այս առիթով:

- Իմ տպավորությունն է, որ մարդիկ կառչած են այն վիճակից, որի մեջ ապրում են: Քաոսը, որ ձեւավորվել է տարիների ընթացքում, արմատացել է շատերի հոգիներում, եւ այդպես արմատացած էլ փորձում են պահել նույն կարգավիճակը: Կան վախեր, կան անհասկանալի բաներ: Եկել է մի պահ, որ չես կարողանում հասկանալ՝ ինչ է կատարվում մարդու հոգում, ինչ է ուզում: Եթե յուրաքանչյուր մարդու մոտենաս եւ հարցնես՝ ինչ ես ուզում, կտեսնես, որ ինքը չի հասկանում: Այս պահին մի սցենարի վրա ենք աշխատում, որի վերնագիրն է՝ «Հայրենիք»: Հակակերպարներից մեկը հայտարարում է, որ հայրենիք գոյություն չունի, երբ զարմացած հարցնում են, թե ինչպես, ասում է՝ այո, այն գոյություն ունի պարզապես ժողովրդի ուղեղում, չկա ժողովուրդ՝ չկա հայրենիք: Ես փորձում եմ արվեստի տեսանկյունից նայել, որովհետեւ, եթե իրականությանն ուղիղ մի քիչ շատ նայեմ, հաջորդ հարցազրույցի համար երեւի հոգեբուժարանում ինձ հետ կհանդիպեք, որովհետեւ սթափ նայել, գնահատել այն, ինչ կատարվում է, եւ այդ ամենին անտարբեր մնալ, անհնար է: Երեւի մարդիկ ուզում էին այն, ինչ եղավ, նույն խոսակցությունները շարունակվում են նույնաբովանդակ ֆորմայի մեջ: Ունենալու ենք նույն խորհրդարանը, որ ունեինք վերջին տարիներին, եթե մարդկանց ուզածը դա է, ես՝ որպես արվեստագետ, կփորձեմ ֆիլմերով, ներկայացումներով կամ հրապարակային խոսքով իմ ազդեցությունն ունենալ, որ մարդը լավն ուզենա, վերջապես:

- Եթե իշխանությունը նույնն է մնում, ուրեմն մենք համաձայն ենք Արցախի էթնիկ զտման, Եկեղեցու դեմ հալածանքի, մեր պատմության ու ցեղասպանության ուրացման հետ, որ Արարատը մեզ հետ կապ չունի: Այդպե՞ս է:

- Հայը, որ չունի իր սրտում Արարատը, հայը, որ չունի իր սրտում Արցախի ազատամարտը, որով ինքն անկախացավ, եւ չունի իր արյան մեջ ոչ միայն հայոց, այլեւ համաշխարհային ցեղասպանությունների դեմ պայքարի տեսակը, արդյո՞ք հայ է: Իսկ եթե կեղծված են ընտրությունները, դա արդեն խնդիր է, եւ կապ չունի, թե ում կողմից է կեղծված՝ իշխանությա՞ն, ընդդիմությա՞ն, թե՞ երրորդ ուժի: Դա չպետք է լինի, անգամ ամենավատթար վիճակը պետք է արդար լինի: Եթե մենք անգամ դեմ ենք իշխանությանը կամ ընդդիմությանը, պետք է հասկանանք, որ արդար է հաղթել: Ես դեմ եմ ընտրակեղծիքներին: Ես պետք է շնորհավորեմ, անկախ այն փաստից՝ պարտվե՞լ, թե՞ հաղթել է իմ ուզած ուժը: Պետք է գիտակցեմ, որ այս ուժը հաղթել է: Մենք պետք է, թեկուզ ընդդիմադիր կեցվածքով, շարունակենք ապրել իրար հետ: Ես իշխանության ջատագով արվեստագետ չեմ ընկալում, ինչպես իմ շատ արվեստագետ կոլեգաներ, որ, չգիտես ինչու, ով իշխանության է, նրա ջատագովն են: Ես զգացել եմ նաեւ, որ ինչ-որ վախի զգացողություն կա: Ես հիմա սպասում եմ ձեւավորված իրական, ճիշտ ընդդիմության առաջխաղացմանը, որը, ցավոք սրտի, չեմ տեսնում իմ երկրում: Ինչքան հիշում եմ, օրվա իշխանությունը եղել է ընդդիմություն, ընդդիմությունը՝ իշխանություն, հիմա տեղերով փոխվել են, նույն մարդիկ են: Մենք նույն մարդկանց մեջ փորձում ենք պտտվել ու հասկանալ: Խոսակցությունը բովանդակային չէ: Վերջին բանավեճը, որ լսում էի, ուզում էի հասկանալ՝ սա հանրային հեռուստատեսությո՞ւնն է, թե՞, ներողություն, անհասկանալի, կենցաղային ինչ-որ կեղտոտ բանավեճի ալիք: Բայց հարցն այն է, որ մեր հանրությունը սովորել է դրան, եւ մեր խեղճ հանրությանը ես չեմ կարող մեղադրել, անգամ նրանց, որոնց հետ ես համաձայն չեմ:

- Հունիսի 7-ը հայրենիքի համար կռիվ էր, մենք պարտվեցի՞նք այդ կռվում:

- Ես չեմ ուզում հունիսի 7-ը համեմատել հայրենիքի համար կռվի հետ: Մի քիչ շատ ենք խոսում հայրենիք կորցնելու մասին, իսկ ի՞նչ ենք անում, որ չկորցնենք: Երբ հայրենիքին վտանգ սպառնա, ինձ նման եւ ինձնից շատ ավելի լավ տղաներ վազելու են առաջնագիծ, իսկ խոսացողներն այդպես էլ մնալու են խոսացող: Հայրենիքի համար պետք է պայքարել ամեն օր, ամեն մեկը՝ իր գործով: Անցյալ տարի մենք Արցախի հեռուստատեսության հետ նկարահանեցինք «Տուն էր մտել» փաստավավերագրական ֆիլմ՝ Արցախի շրջափակման օրերի մասին, որը ֆիլմարտադրողների ֆեդերացիայի շնորհիվ հասավ Կաննի տաղավար: Մեր տղաներն «Օսկարի» են մասնակցում, այսինքն՝ հայրենիքի համար պայքարը պետք է սկսվի քարը քարի վրա դնելուց: Իսկ եթե դու զբաղված ես դատարկախոսությամբ, ինչպես մեծամասնությունը, ուզում եմ հասկանալ՝ սա բամբասանքի՞ երկիր է: Սեւակն ասում է՝ խավարի դեմ պայքարելու լավագույն ձեւը մի մոմ վառելն է: Դու մտել ես ներս եւ հայհոյում ես, թե ինչու է մութ. այ մարդ, մի հատ մոմ վառիր:

- Մեր արվեստագետները միշտ էլ այդ մեկ մոմը վառել են, բայց արդյո՞ք հասարակությունը խավարից դուրս է եկել:

- Ես իմ կոլեգաներից շատերին վատ բան չեմ ուզում ասել, բայց ցավով եմ տեսնում, եւ դա նոր չէ, գալիս է դեռ ԽՍՀՄ-ից, որ մերոնք ավելի շատ պրոպագանդիստներ են, քան՝ արվեստագետներ: Փարաջանովը «պերսոնա նոն գրատա» էր, բայց ինքը ամենահանճարեղներից էր (էլի կարող ենք թվարկել), մնացածը նախարարությանը կից աշխատակիցներ են եղել: Այդ մտածելակերպը մինչեւ դուրս չգա, վիճակը չի փոխվի: Մեր թատրոնները, մեր կինոն ազատ չեն. ինքն պետական ոչ առեւտրային կառույց է եւ արդեն թատրոն չէ, ՊՈԱԿ է, վերջ: Քո խաղացանկը հաստատում է նախարարությունը՝ ըստ իր ճաշակի, իր ցանկության, բայց դու չես կարող առօրեական ճիշտ, սուր բաներ խոսել, երբ ազատ չես: Երբ այդ ազատության գաղափարախոսությունը, մտքի ազատությունը չկա, արդեն սխալ է: Բացի այդ, թայֆայացված խնդիր կա, վախկոտ են: Չի կարող մտավորականը լինել վախկոտ: Գիտե՞ք զավեշտը որն է, ես տեսել եմ բոլորին եւ լավ հիշում եմ. այն նույն մարդիկ, որոնք ջատագովն են օրվա իշխանության, 10 տարի առաջ ջատագովն էին նախորդ իշխանության, դրանից 10 տարի առաջ էլ՝ նրանց նախորդի, վաղն ով գա՝ լինելու են նրանց ջատագովը: Երբ հանրությունը տեսնում է սա, ասում է՝ եթե սա է իմ մտավորականը, ես ի՞նչ ունեմ խոսելու նրա հետ: Դո՛ւ ես մեղավորը, որ հանրությունը քեզ այդպես է վերաբերվում, դու անկեղծ չես, վախկոտ ես, իսկ վախկոտ մարդուն չեն սիրում, որովհետեւ դու օրվա իշխանության հետ վազողն ես: Դու պետք է լինես ազատ, եւ օրվա իշխանությունը քեզ հետ պետք է հաշվի նստի, գա եւ լուռ հաղորդվի քո արվեստին, նաեւ՝ ընդդիմությունը: Արվեստը պետք է նաեւ միավորի, արվեստն իրավունք չունի միայն ասելու, որ դու սխալ ես, պետք է օգնի քեզ՝ վերափոխվել, մաքրազարդվել:

- Արվեստագետը մաքրագործում է, իսկ հասարակության մակարդակն ավելի է իջնում, ինչպե՞ս հասկանալ այդ աբսուրդը, ո՞վ է մեղավոր:

- Դո՛ւ ես մեղավոր, մտավորական: Մտավորականը նույն հասարակության մեջ է, սխալ է, երբ ասում է՝ մենք հասարակությունից բարձր ենք, ո՛չ, դու հասարակության ներկայացուցիչն ես, նրա ծնունդը: Եթե դու քեզ վրա պատասխանատվություն ես վերցրել՝ լինել սիրտը, կներեք, չես կարող լինել ամորձիները: Եթե քո վրա դրված է պարտականություն՝ լինել սիրտ եւ քարոզել սեր, դու իրավունք չունես իջնել ներքեւ: Երբ այդքան իջնում ես, հասարակությունն էլ ասում է՝ այ մարդ, էս մարդը պիտի սիրտ լինի, բայց ոտնաման է, ես ինչո՞ւ պետք է այս ոտնամանի ետեւից գնամ, եթե մի օր ինքն այսպես է, մի օր՝ այնպես: Պետք է այս անցած տարիները վերլուծել, ինձ թվում է՝ երկրում ամենամեծ բանը, որ պակասում է, սերն է: Ես տեսնում եմ, որ իրական սերը պակասում է:

- Սերը հայրենիքի նկատմամբ գալիս է նախ մարդու նկատմամբ սիրուց, մենք կարողանո՞ւմ ենք սիրել դժվար վիճակում գտնող մեր կողքինին:

- Մարդը հացադուլ է հայտարարում՝ Արտուր Օսիպյանի մասին եմ խոսում: Առաջին օրից գնացել ենք՝ հրապարակում կանգնել, մեր կողքը շատ քիչ մարդ է եղել: Ես չգիտեմ, թե նա ինչ է արել, կարող է սխալ է կամ ճիշտ, բայց ես՝ որպես մարդ, չեմ կարող անտարբեր մնալ մարդու առողջության նկատմամբ: Մեր ընտանիքի մոդելը փոխվել է, մի շատ վատ արտահայտություն կա՝ դե, տուն եմ պահում: Ո՞ւմ հաշվին ես տուն պահում, հայրենիքիդ կործանմա՞ն հաշվին: Ես չեմ էլ նայել՝ ընտրությունն ինչպես էր, ոնց էր: Իսկ այն, ինչ կատարվում էր ընտրարշավի ժամանակ, ամոթ էր, ես՝ որպես մարդ, ամաչում էի, բոլորի համար էի ամաչում: Որովհետեւ դու, լինելով արվեստագետ, չես կարողացել ազդել մարդկանց վրա այնպես, որ մարդիկ նման բառապաշարով չխոսեն, դա իմ մեղավորության չափաբաժինն է: Երբ մարդիկ ինձ պես հասկանան, որ իրենք մեղավոր են նույն չափով, միգուցե լավ լինի ամեն ինչ: Ուրիշ ի՞նչ ենք ուզում, այն հասարակությունը, որ դաստիարակվել է այս սերիալային դաշտում եւ այս ամենի մեջ, որը ստեղծվել է իմ կոլեգաների կողմից, էս պետք է ուզի: Դու այնքանով ես մեղավոր, որ չես կարողացել տեղ հասցնել ճիշտը: Ես հույս ունեմ, որ առաջիկա 5 տարիները մենք կաշխատենք այնպես, որ փոխվի այն երկխոսությունը խորհրդարանում, որը կար 5 տարի, երբ բացի իրար հայհոյելուց, ուրիշ բան չլսեցինք: Իշխանություն լինես, թե ընդդիմություն, դու պատասխանատու ես, երկուսդ էլ պարտավոր եք աշխատել այս երկրի համար: Երկուսդ էլ ընտրվել եք, որ 5 տարի ծառայեք Հայաստանի Հանրապետությանը: Եվ պետք է ծառայեք, ոչ ոք այս երկրում ձեր ստրուկը չէ, դուք ծառան եք այս երկրի, այս հասարակության: Երբ այս գիտակցությունը լինի մեր հասարակության մեջ՝ որ տեր չեն ընտրում, այլ՝ ծառա, որը 5 տարի պարտավոր է ծառայել իր շահերին, գուցե մի բան փոխվի:

- Մենք տեսանք, թե նախորդ 5 տարում ինչեր կորցրինք, եթե առաջիկա 5 տարիներին էլ շարունակենք կորցնել, ի՞նչ կմնա:

- Ես վախենում եմ նման բառեր ասել, որովհետեւ մշակույթի մարդկանց բառերը երբեմն մարգարեական են լինում, դրա համար եմ զուսպ խոսքիս մեջ: Ես չեմ ուզում խոսել կորուստներից, ես հույս ունեմ, որ ոչ թե ընդդիմությունը կամ իշխանությունը, այլ հասարակությունը թույլ չի տա: Հասարակությունը երեք օրում էլ կարող է փոխել ամեն ինչ, եթե ոտքի կանգնի եւ ուզի: Եթե հասարակությունը համերաշխ լինի կորստի հետ, ուրեմն այս հասարակությանը փրկություն չկա, նաեւ՝ մեզ, որովհետեւ մենք այս հասարակության մի մասն ենք: Իսկ եթե «մենք ենք տերը մեր երկրի» բառերի փոխարեն իրոք լինի բովանդակային երկխոսություն, ամեն ինչ կընկնի տեղը: Հասարակությունն ի վիճակի է փոխել ամեն ինչ, եթե հասկացավ, որ ինքը չունի կորցնելու՝ չի կորցնի, իսկ եթե ուզում է կորցնել, ինչ ուզում ես արա՝ կորցնելու է:

- Փորձենք ամփոփել՝ ի՞նչ կցանկանաք ասել մեր ընթերցողին:

- Ես կանդրադառնամ այն առանցքին, ինչի շուրջ շարունակելու եմ ապրել: Ես Արցախ գնացի, որովհետեւ Արցախ երկիրը սիրում էի: Ես չէի կարող բացատրել, թե ինչու, լինելով երեւանցի, այս բարդ իրավիճակում հասա Արցախ: Կապ չունի, թե որտեղ ես ապրում, կարեւորը՝ կարողանաս սիրել: Ես կխնդրեմ՝ նայեք ձեր շուրջը, նայեք ձեր երկրի ամեն թփին, ամեն անկյունին, նայեք արեւածագին եւ մայրամուտին, նայեք՝ ինչ կապույտ է երկինքը, տեսեք՝ ձմեռն ինչ գեղեցիկ է: Երբ տեսնեք, ճանաչեք, սիրեք, միգուցե հասկանաք: «Էս երկիրը երկիր չի» ասելը ոչ մի լավ տեղ չի տանելու: Նայեք ձեր շուրջը, գնահատեք՝ ինչ ունեք, եթե չեք գնահատում, դա էլ չեք ունենա: Պինդ, ամուր կառչեք այն գեղեցկությունից, այն արժեքից, որ ունեք, որ դարերի կորստից հետո հասել է ձեզ:

Հուսիկ Արա

ԱՄՆ-ԻՑ ԹՎԻԹԵԼ ԵՆ, ԵՄ-ՈՒՄ՝ ԹՎԻԹՆԵՐԸ «ՋՐԵԼ», ՊԵԿԻՆՈՒՄ ԵՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԼՈՒՌ ԵՆ

Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները, որ շատերի, եթե ոչ բոլորի հիշողության մեջ դաջվել են հատկապես կեսգիշերից անց, կիսամեռ դեմքով էկրաններին հայտնված ու իր կուսակցությանը հաղթող հռչակած Նիկոլ Փաշինյանի կերպարանքով, ժամառժամ ավելի ու ավելի անվստահելի են դառնում ԿԸՀ հրապարակած արդյունքների առումով, փոխարենը խորանում են մասշտաբային թվանկարչության կասկածները:

Եթե գոյություն ունի արդեն բացահայտված 800-900 հասցե, որոնցից յուրաքանչյուրում ընտրական իրավունք ունեցող 20-ից մինչեւ 300 ՀՀ քաղաքացի է հաշվառված եղել, դա արդեն նշանակում է նվազագույնը մի քանի տասնյակ հազար ձայնի կեղծման պոտենցիալ՝ հօգուտ ՔՊ-ի: Կան նաեւ տասնյակ, գուցե հարյուրի կարգի դեպքեր, երբ ՔՊ-ի ստացած երկնիշ թվով քվեների փոխարեն ԿԸՀ կայքի աղյուսակում մուտքագրվել են եռանիշ թվեր՝ 500, 700, չգիտես էլ ինչ: Դա էլ է ենթադրում մի քանի տասնյակ հազար ձայնի կեղծում: Այնպես որ, հիմա բոլորը սպասում են վերահաշվարկների ավարտին եւ ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակմանը, ընդսմին՝ որքան հետաքրքիր է այն, թե որ ուժին որքան ձայն կավելանա, էլ ավելի հետաքրքիր է այն, թե ՔՊ-ից ինչքան կպակասի, վերջնահաշվում ՔՊ ձայները քանի տոկոս կկազմեն, եւ նրանք քանի մանդատ կստանան: Միանգամայն սպասելի է, որ ՔՊ-ի ձայները մի քանի տոկոսով կիջնեն, եւ մանդատները պարզ մեծամասնության հազիվ բավարարեն:

Սակայն հունիսի 14-ին ԿԸՀ-ի կողմից ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից ավելի հետաքրքիր է միջազգային արձագանքի գրեթե բացակայությունը, որ արձանագրվեց հունիսի 7-ի ՀՀ ընտրությունների առնչությամբ, եւ այն միջազգայնորեն մեկուսացված վիճակը, որում հայտնվել է Փաշինյանը: Ըստ էության, ոչ մի երկրից կամ առաջնորդից պատշաճ շնորհավորական ուղերձ չստացվեց, եղան երկու տասնյակի կարգի թվիթներ, որոնց կեսը նախկին խորհրդային երկրներից էին:

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի՝ X հարթակում կատարած գրառումը փորձ եղավ՝ մատուցելու որպես ԱՄՆ շնորհավորանք, ինչը քմծիծաղի արժանի ձեռնածություն է: ՀՀ համարյա բոլոր համապետական ընտրությունների առթիվ ԱՄՆ-ից պետքարտուղարության պաշտոնական արձագանք է եղել, նույնիսկ 2000-ականներին՝ Քոչարյանի իշխանության տարիներին: Իհարկե, Քոչարյանի օրոք էլ, Սերժ Սարգսյանի օրոք էլ ընտրություններն այնպես էին կեղծվում, որ ես դժվարանում եմ մտաբերել դեպք, երբ Պետդեպի ուղերձներում որեւէ քաղաքական ուժի շնորհավորանք ուղղվեր: Եթե «շնորհավորել» բառը լինում էր, ապա միայն հայ ժողովրդին ուղղված՝ ընտրական իրավունքն իրացնելու կապակցությամբ, որից հետո, մի քանի նախադասությամբ գնահատական էր տրվում ընտրություններին: Սակայն Պետդեպի պաշտոնական անդրադարձ, ուղերձ միշտ լինում էր:

Այժմ, ենթադրելի է՝ որպես Փաշինյանի հանդեպ չթաքցվող վերաբերմունք, Պետդեպի կայքում ՀՀ ընտրություններին առհասարակ անդրադարձ չկա: Երեք օր անց միայն Ռուբիոյի անձնական գրառումն է X հարթակում: Սպիտակ տնից երկար սոցցանցային գրառում էլ չկա: Դա ավելի քան օրինաչափ է, քանի որ այն բանից հետո, երբ Փաշինյանը մայիսի 28-ին Դոնալդ Թրամփի թվիթը Social Truth օգտահաշվից տարածվելուց ժամեր առաջ Երեւանում արդեն տարածել էր, անխուսափելիորեն նրա նկատմամբ պետք է վերաբերմունք դրսեւորվեր՝ ցույց տալով, որ ինքն այն նշանակությունը չունի Սպիտակ տան համար, ինչ ուզում են ներկայացնել: Միայն հունիսի 10-ի երեկոյան Թրամփի նույն Social Truth օգտահաշվից երկու-երեք տողանոց շնորհավորական թվիթ տարածվեց:

Մոսկվայում եւ Պեկինում դեռ լռություն է, ինչը կարելի է մեկնաբանել, որ կամ այդ մայրաքաղաքների համար Փաշինյանն իր ՔՊ-ով արժեք եւ նշանակություն չունի, կամ էլ ի տես լայնամասշտաբ կեղծարարության եւ խախտումների, որ փաստագրված են եւ անընդհատ հրապարակային դաշտ են նետվում, Մոսկվայում եւ Պեկինում էլ, ինչպես բազմաթիվ այլ մայրաքաղաքներում, դեռ սպասում են՝ տեսնելու, թե այս ամենն ինչով կավարտվի:

Հունիսի 7-ի ընտրությունների արտերկրյա արձագանքներից ամենահակասականն ու հետաքրքիրը, սակայն, Եվրոպայից արձագանքներն էին: Հունիսի 8-ի առավոտյան, ցերեկվա ժամերին, ԵՄ մոտ 10 երկրից՝ Ֆրանսիա, Լեհաստան, Շվեդիա, Իսպանիա, Ավստրիա, Դանիա, Գերմանիա, Հունաստան, Նիդերլանդներ, Խորվաթիա, Կիպրոս, մեկ-երկու տողանոց թվիթներ գրեցին՝ ընտրությունների առթիվ Փաշինյանին շնորհավորող: Ինչպես ասվեց, նույնը արել էին նաեւ նախկին խորհրդային երկրները՝ Ղրղզստան-Ղազախստանից մինչեւ Լատվիա եւ Էստոնիա: Բայց նույն՝ հունիսի 8-ի երեկոյան Բրյուսելից, ԵՄ բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասի անունից տարածվեց ԵՄ պաշտոնական հայտարարությունը՝ ՀՀ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ, որն արդեն ծանրակշիռ էր, իրազեկ եւ լուրջ: Դրանում չկար ոչ մի շնորհավորանք Փաշինյանին կամ ՔՊ-ին, նրանց վերագրվող ոչ մի հաղթանակ, միայն ի գիտություն էին ընդունել ԿԸՀ նախնական արդյունքները (ԵՄ հայտարարությանը մանրամասն անդրադարձել ենք «ՔՊ-ական ժուլիկություն՝ թվիթները շնորհավորական ուղերձի տեղ անցկացնելով» հոդվածում https://hraparak.am/am/post/5062a715bbaf75729c46c5734393ad1e): Բրյուսելի այդ պաշտոնական հայտարարությունը, ըստ էության, չեզոքացրեց օրվա ընթացքում եղած թվիթային արձագանքները, եւ, ինչն առանձնակի խոսուն է, Բրյուսելի պաշտոնական հայտարարությունից հետո ՀՀ ընտրությունների առնչությամբ որեւէ այլ գրառում եվրոպական որեւէ մայրաքաղաքից՝ ԵՄ կազմում կամ դրանից դուրս, այլեւս չեղավ: Բրյուսելի հայտարարությամբ ամրագրվեց դիրքորոշում, եւ դրվեց վերջակետ:

Մերձավոր Արեւելքի երկրներից, արաբական Մաշրեքից ու Մաղրեբից, ամբողջ Հեռավոր Արեւելքից, Լատինական Ամերիկայից ոչ մի անդրադարձ, ուղերձ չի եղել ՀՀ ընտրությունների առնչությամբ, բացառությամբ՝ Հնդկաստանի, Իրաքի եւ Իրանի: Նույնիսկ Արաբական Միացյալ Էմիրություններից, որ Փաշինյանին եւ Ալիեւին անցյալ տարեվերջին կեսական մրցանակի էին արժանացրել, անտեսել են Փաշինյանին: Անգամ Թուրքիայից շնորհավորանք չի եղել, ԱԳՆ-ից են մի քանի տող տարածել՝ առանց Փաշինյան կամ ՔՊ հիշատակելու:

Աշխարհում, ահա, այսքան անտեսված են այն Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ն, որոնց թվում է, թե իրենք աշխարհի հետ Հայաստանի կապերն են սերտացնում:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 12.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՊԻՍԻՆ ԿԼԻՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 10 ՏԱՐԻ ԱՆՑ

Նարեկ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

New Yorker պարբերականը ներկայացրել է հոդված այն մասին, թե 10 տարի անց ինչպիսին կարող է լինել բարձրագույն կրթությունը: Առաջին հերթին, ըստ հոդվածի, կնվազի ուսանողների թիվը: Դա պայմանավորված կլինի ծնելիության նվազմամբ: Արդյունքում՝ բավականին շատ ոչ մեծ մասնավոր քոլեջներ եւ ռեգիոնալ համալսարաններ կկանգնեն ֆինանսական խնդիրների առաջ եւ հնարավոր է՝ փակվեն: Հնարավոր է նաեւ, որ պահպանեն իրենց գոյությունը՝ միավորվելով ավելի մեծերի հետ եւ շարունակելով գործել որպես ավելի մեծ համալսարանների մասնաճյուղ կամ ստորաբաժանում: Բուհական համակարգերի միջեւ մեծ մրցակցություն կլինի, եւ կգործի «հաղթողը ստանում է ամեն բան» սկզբունքը: Խոշոր եւ ուժեղ համալսարանները կկարողանան իրենց ձեռքում կենտրոնացնել ռեսուրսներ եւ ուսանողներ: Ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացը, որքան էլ փորձենք նայել դրական լույսի ներքո, բերելու է նրան, որ հատկապես համալսարանների եւ արհեստական բանականության տեխնոլոգիաների ոլորտում աշխատող ընկերությունների միջեւ հակասությունները կշարունակվեն ու կխորանան: Կլինեն նաեւ դեպքեր, երբ ԱԲ ոլորտի խոշոր ընկերությունները գործընկերային հարաբերություններ կհաստատեն համալսարանների հետ, որի արդյունքում՝ բարձրագույն կրթական պրոցեսում կներդրվեն համապատասխան ԱԲ լուծումներ: Ինչքան էլ կարող է ծիծաղելի հնչել, սակայն ընդամենը տասը տարի անց՝ առաջին կուրսեցիների մոտ խնդրահարույց կարող են լինել ընթերցանության, առանց տառասխալի գրելու եւ մաթեմատիկական բազային գիտելիքների տիրապետելու հարցերը: Եվ ստիպված՝ համալսարանները, այս բացը լրացնելու համար, կներդնեն դասընթացներ, որոնք ավելի շատ հարիր են այսօրվա ավագ դպրոցականներին: Տասը տարի անց աշխարհում կարող է հայտնվել առաջին պետական համալսարանը, որը գործելու է ԱԲ տեխնոլոգիայի բազային հիմքի վրա:

Մյուս կողմից, թանկարժեք կամ բարձրակարգ՝ էլիտաների համար նախատեսված համալսարաններն ու քոլեջները կշարունակեն պահպանել իրենց ազդեցությունն ու դիրքերը: Դրական կհամարվի այն, որ բուհական համակարգում էականորեն կկրճատվի վարչաբյուրոկրատական ապարատը, լինեն դրանք կոորդինատորներ, մենեջերներ, խորհրդատուներ թե վարչական աշխատողներ: Ընդհանուր առմամբ, ըստ հոդվածի, առաջիկա տասը տարին կարող է բարձրագույն ուսումնական համակարգի համար դառնալ շրջադարձային փոփոխությունների ժամանակաշրջան:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am